# ՕՐԵՆՔ №31

ԻՐԱՎԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

2012 Թ. (7)

- ՕՐԵՆՔՆԵՐ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ
- ՄՐՑՈՒՅԹՆԵՐ
- ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ
- ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արմեն Սարգսյան
«Գործք» ՍՊԸ-ի տնօրեն

«ԳՈՐԾՔ» ՍՊԸ

Գրանցված է 11.02.2005թ.,
պետական գրանցման
վկայական՝ N 03Ա067699,
տրված՝ 14.02.2005թ.

Տպաքանակը՝ 1050
Գինը՝ պայմանագրային

Տպագրության է տրվել 18.07.2012թ.
Տպագրվել է՝
«ԱՆՏԵՆՈՐ» տպարանում

Գովազդային նյութերի բովանդակության
համար խմբագրությունը
պատասխանատվություն չի կրում:

Լրատվական գործունեություն
իրականացնող՝ «Գործք» ՍՊԸ

Գլխավոր խմբագիր՝
Արթուր ՍԱՐԳՍՅԱՆ
Ձևավորող՝
Լևոն Ամիրզյան

Խմբագրության հասցեն՝
ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք
հեռ.՝ (010) 54-19-85
ֆաքս՝ (010) 56-72-93
www.gortsq.am
www.press.gortsq.am
press@gortsq.am

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

## ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ
Աշխատանքի իրավունքի պաշտպանի (հաշտարարի) գրասենյակի ղեկավար

## ԱՇՈՏ ԵՍԱՅԱՆ
ՀՀ գլխավոր դատախազության աշխատակազմի ղեկավար

## ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ՎԱՐԴԱՆ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
ՀՀ ԱԺ ֆինանսատնտեսական հանձնաժողովի նախագահի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ
ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ԷԴՈՒԱՐԴ ԹՈՒՄԱՍՅԱՆ
ՀԱՄԿ-ի նախագահ

## ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


## I. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 4

*1.1. Օրենքներ*

Աննախադեպ փոփոխություններ հարկային եվ պարտադիր վճարների վերաբերյալ ՀՀ օրենսդրություններում, որոնք ուժի մեջ են մտնելու 2013 թվականի հունվարի 1-ից

- «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը և նրանում կատարված փոփոխությունը, որոնք ուժի մեջ են մտնում 2013 թվականի հունվարի 1-ին ---------- 4
- «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ---------- 20

*1.2. ՀՀ կառավարության որոշումներ* ---------- 27

- «Մինչև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման կարգը սահմանելու մասին», որն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ին
- «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) լիազորությունները ներքին աուդիտորներին (ներքին աուդիտի ստորաբաժանումներին) վերապահելու և ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 21-ի N1923-Ն և 2005թ. N1187-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2012 թվականի մայիսի 31-ի N 732 - Ն որոշումը---------- 30

## II. ՀԱԾՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱԾՎԱՌՄԱՆ ԲԱՆԱԳԻՏ 33

2.1. Հարկային օրացույց ---------- 34

2.2. «2012 թվականի Հայաստանի Հանրապետության լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի երրորդ փուլը և երկրորդ փուլի արդյունքները---------- 37

## III. ԿՈՂՄԻՆ ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԳԻՏ 44

3.1. Մարտահրավեր ՀՀ աշխատանքային և հարկային օրենսդրություններում առկա հակասությունների և տարընթերցումների դեմ---------- 45

3.2. Աշխատանքային պայմանագրի լուծումը՝ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու պատճառով---------- 49

3.3. «2012 թվականի Հայաստանի Հանրապետության մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթի երրորդ փուլը և երկրորդ փուլի արդյունքները---------- 56

3.4. Օգտակար խորհուրդներ ---------- 62

## IV. ՀԱՐԺ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ 64

# ԱՆՆԱԽԱԴԵՊ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՈՐՈՆՔ ՈՒԺԻ ՄԵՋ ԵՆ ՄՏՆԵԼՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի Ց

## «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԸ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

**ՏԵՂԵԿԱՆՔ**

- ✓ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, Երևան քաղաքում: Հաշվառման համար՝ ՀՕ - 246-Ն:
- ✓ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն է կատարվել 2012 թվականի մարտի 19-ին, որը ստորագրվել է 2012 թվականի ապրիլի 16-ին: Հաշվառման համար՝ ՀՕ-154-Ն:
- ✓ 2012 թվականի մարտի 19-ին ընդունված օրենքով՝
  - փոփոխություն է կատարվել «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում:
- ✓ 2012 թ. մարտի 19-ի ընդունված օրենքն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի1-ից:
- ✓ Օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2012 թվականի մայիսի 31-ին ընդունել է N 692-Ն որոշումը: Այն ներկայացվում է «Գործքի» սույն համարում:
- ✓ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով 2013 թվականի հունվարի 1-ից ուժը կկորցնեն «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները:

**Ուշադրություն** - «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում տեղ են գտել արտահայտություններ, որոնք վաղուց կորցրել են իրենց իրավաբանական ուժը: Խոսքը մասնավորապես վերաբերում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասում օգտագործված «աշխատանքային պայմանագրերի գրանցամատյան» և «աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման հրամանագիրք» արտահայտություններին: Եթե աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանի կիրառումը դուրս է եկել 2010 թվականի հունիսի 24-ի ՀՕ-117-Ն օրենքով և ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 2-ի N 1698-Ն որոշմամբ, ապա աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման հրամանագրքի վարման աշխատանքները դադարել են 2006 թվականի հունիսի 16-ի թիվ 875-Ն որոշմամբ:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ սույն համարում ներկայացվում է ոչ միայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը և նրանում կատարված փոփոխություններն ամբողջությամբ, այլև այդ ոլորտը կարգավորող նոր ընդունված այլ իրավական ակտերը՝ «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և ՀՀ կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի «Մինչև «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման կարգը սահմանելու մասին» N 692-Ն որոշումը, որոնք նույնպես ուժի մեջ են մտնելու 2013 թվականի հունվարի 1-ից:

Այսպիսով, ստորև ներկայացվում է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը և նրանում կատարված փոփոխության ինկորպորացիան, որում փոփոխությունը ներկայացվում է հին տարբերակի վրա գիծ քաշելու ձևով, նորը՝ գունավորված:

Այսպես.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին

# ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

## Գ Լ Ո Ւ Խ 1
## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

### Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, սահմանում է Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ վճարողների շրջանակը, եկամտային հարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը:

### Հոդված 2. Եկամտային հարկի հասկացությունը

1. Եկամտային հարկը հարկ վճարողների կողմից (օրենքով սահմանված դեպքերում հարկային գործակալի՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի միջոցով) սույն օրենքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է:

## Գ Լ Ո Ւ Խ 2
## *ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏԸ*

### Հոդված 3. Եկամտային հարկ վճարողները

1. Հայաստանի Հանրապետությունում եկամտային հարկ վճարողներ են համարվում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ (այսուհետ՝ ռեզիդենտ) և Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ (այսուհետ՝ ոչ ռեզիդենտ) ֆիզիկական անձինք, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերը և նոտարները (այսուհետ՝ հարկ վճարողներ):

2. Սույն օրենքի իմաստով ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ որի կենսական շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունում է, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը:

Սույն օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը Հայաստանի Հանրապետությունում է, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը (որտեղ բնակվում է նրա ընտանիքը) և նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

3. Սույն օրենքի իմաստով ոչ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը սույն հոդվածի 2-րդ մասին համապատասխան ռեզիդենտ չէ:

**Հոդված 4. Հարկվող օբյեկտը**

1. Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացման ենթակա հարկվող եկամուտը:

2. Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացման ենթակա հարկվող եկամուտը:

3. Հարկվող եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի համախառն եկամտի և սույն օրենքով սահմանված նվազեցվող եկամուտների ու ծախսերի դրական տարբերությունն է, եթե սույն օրենքով հարկվող օբյեկտի որոշման առումով այլ բան սահմանված չէ:

**Հոդված 5. Համախառն եկամուտը**

1. Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի կողմից ստացման ենթակա բոլոր եկամուտների հանրագումարն է:

2. Եկամուտ է համարվում աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կամ ցանկացած այլ հիմքով հարկ վճարողի ստացման ենթակա գույքը, ինչպես նաև բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա եկամուտները:

3. Բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացման ենթակա եկամուտները համախառն եկամտում հաշվի են առնվում ազատ (շուկայական) գներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

4. Ֆիզիկական անձանց կողմից արտարժույթով ստացման ենթակա եկամուտները վերահաշվարկվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ելնելով դրանց ստացման իրավունքի ձեռքբերման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

**Հոդված 6. Նվազեցվող եկամուտները**

1. Սույն օրենքի իմաստով նվազեցվող եկամուտներ են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարվող նպաստների գումարը, բացառությամբ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպաստների գումարների.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարվող բոլոր տեսակի կենսաթոշակները (այդ թվում՝ սահմանված կարգով կենսաթոշակների պարտադիր կուտակային համակարգին կամավորության սկզբունքով մասնակցելու դեպքերում վճարվող կենսաթոշակները), բացառությամբ սահմանված կարգով կենսաթոշակների կամավոր կուտակային համակարգին մասնակցության շրջանակներում վճարվող կենսաթոշակների.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կողմից կատարվող կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարները՝ հարկ վճարողի հարկվող եկամտի 5 տոկոսը չգերազանցող չափով.

4) ապահովագրական հատուցումները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով հարկ վճարողի կողմից իր համար և (կամ) հարկ վճարողի համար երրորդ անձի (այդ թվում՝ գործատուի) կատարած կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարների հաշվին սահմանված կարգով ստացման ենթակա հատուցումների (այդ թվում՝ կենսաթոշակների).

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմաններով պետության կողմից հարկ վճարողի համար կատարվող կուտակային կենսաթոշակային ապահովագրության վճարները.

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կուտակային կենսաթոշա-

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

14) ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը.

15) եղջերաբուծության և ուղտաբուծության արտադրանքը.

16) ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը.

17) ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը:

3. Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացման ենթակա եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային զուտ եկամտային տվյալների վրա:

**Հոդված 9. Ոչ ռեզիդենտի ստացման ենթակա եկամուտների հաշվառումը հարկվող օբյեկտում**

1. Ոչ ռեզիդենտի հարկվող օբյեկտը որոշելիս, բացի սույն օրենքի 6-8-րդ հոդվածներով սահմանված եկամուտներից, ոչ ռեզիդենտի համախառն եկամտում չի ներառվում նաև ոչ ռեզիդենտին հայաստանյան աղբյուրներից վճարման ենթակա եկամուտը՝ կապված արտաքին տնտեսական գործունեության հետ:

2. Սույն օրենքի կիրառման նպատակով արտաքին տնտեսական գործունեություն է համարվում բացառապես ոչ ռեզիդենտի անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստան ներկրելու հետ կապված (ապրանքների մաքսային փաստաթղթերի առկայության և տվյալ գործառնությունում միջնորդների բացակայության դեպքում) գործունեությունը, որի դեպքում ռեզիդենտն ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը:

3. Հայաստանի Հանրապետությունում ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտների հարկումը կատարվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով: Սույն օրենքի իմաստով հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ են համարվում՝

1) Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները.

2) Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտը.

3) Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից (արտադրանքի, ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից) ստացված եկամուտները.

4) պասսիվ եկամուտները և ցանկացած այլ հիմքով հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտները:

4. Պասսիվ եկամուտներ են համարվում ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրմամբ) Հայաստանի Հանրապետության տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, մասնավորապես՝

1) շահաբաժինները.

2) տոկոսները.

3) ռոյալթիները.

4) Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտը.

5) Հայաստանի Հանրապետությունում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաճը.

6) փոխադրման ծառայությունների (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտները:

## Գ Լ Ո Ւ Խ 3
## *ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ*

**Հոդված 10. Եկամտային հարկի դրույքաչափերը**

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-8-րդ մասերում նշված դեպքերի՝

1) հարկային գործակալը եկամտային հարկը հաշվարկում է հետևյալ դրույքաչափերով.

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

կան անձանց հաշվարկվող եկամուտներից հարկի պահում: Այս դեպքում հարկային գործակալը հարկի պահումը կատարում է հայտարարությունը ներկայացնելու ամսվանից սկսած:

2. Հարկային գործակալը հարկի պահում (գանձում) չի իրականացնում, եթե՝

1) վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության (ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) արդյունք են, և հարկային գործակալի հետ կնքվում է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ), անձնագրի տվյալները, Հայաստանի Հանրապետությունում բնակության հասցեն և ձեռնարկատիրական գործունեության իրականացման պետական գրանցման ~~վկայականի համարը~~ **«կամ պետական հաշվառման համարը»** կամ

2) եկամուտները վճարման ենթակա են նոտարին:

***(12-րդ հոդվածը փոփ. 19.03.12 ՀՕ-154)***

**Հոդված 13. Եկամտային հարկի հաշվարկման կարգը և հաշվարկների ներկայացումը**

1. Հարկային գործակալները յուրաքանչյուր ամիս սույն օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածներով սահմանված դրույքաչափերով հաշվարկում են եկամտային հարկը՝ դրանից պակասեցնելով վարձու աշխատողների համար հաշվարկած և տվյալ ամսում փաստացի վճարված՝ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նպաստների, ինչպես նաև վարձու աշխատողի մահվան դեպքում տրվող թաղման նպաստի գումարները: Ընդ որում, սույն մասով սահմանված նպաստները պակասեցված են համարվում պակասեցման ամսվան հաջորդող ամսվա 20-ից:

Եթե տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի ընդհանուր գումարը բավարար չէ սույն հոդվածով սահմանված նպաստները վճարելու համար, ապա հարկային գործակալը նպաստը վճարում է իր միջոցներից, որը փոխհատուցվում է պետական բյուջեից մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

2. Հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել սահմանված ձևի եկամտային հարկի ամփոփ հաշվարկ, որտեղ ներառվում են մասնավորապես՝

1) անհատական տեղեկություններ (անուն, ազգանուն, հայրանուն, բնակության (հաշվառման) վայրի հասցե, սոցիալական քարտի համարը) տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող (բացառությամբ միայն պասսիվ եկամուտներ ստացող) ֆիզիկական անձանց, նրանց համար հաշվարկված եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի, իսկ կուտակային կենսաթոշակային համակարգում ներառված անձանց մասով՝ նաև հաշվարկված և պահված կուտակային վճարների վերաբերյալ, ինչպես նաև «Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով սահմանված այլ տեղեկություններ.

2) ամփոփ տեղեկություններ տվյալ հարկային գործակալից բացառապես պասսիվ եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց համար հաշվարկված պասսիվ եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի վերաբերյալ:

3. Եթե անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ստացման ենթակա եկամուտներից սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթներին համապատասխան եկամուտների ստացման աղբյուրի մոտ եկամտային հարկի պահում չի իրականացվում (գանձում չի կատարվում), ապա անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք եկամտային հարկը հաշվարկում են յուրաքանչյուր ամիս, որն արտացոլվում է սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում հարկային մարմին ներկայացվող տարեկան եկամուտների մասին հաշվարկում:

4. Հարկային գործակալները նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված եկամտային հարկի հաշվարկներում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմիններին ներկայացնել ճշտված հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

**Հոդված 14. Եկամտային հարկի գումարը բյուջե վճարելը**

1. Սույն օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան հաշվարկված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

**Հոդված 15. Հարկային մարմնի և հարկային գործակալի կողմից տեղեկանքներ տրամադրելը**

1. Ոչ ռեզիդենտի դիմումի հիման վրա հայաստանյան աղբյուրներից պահված հարկի գումարների վերաբերյալ հարկային մարմինները տրամադրում են համապատասխան տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ձևով և կարգով:
2. Հարկային գործակալները պարտավոր են ֆիզիկական անձանց պահանջով նրանց տրամադրել հաշվարկված և վճարված եկամուտների, պահված հարկի գումարների, ինչպես նաև գործատուի կողմից աշխատողի համար կատարված կուտակային կենսաթոշակային վճարումների մասին տեղեկանքներ:

## Գ Լ Ո Ւ Խ 5
## *ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻՑ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԸ ՀԱՇՎԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ*

**Հոդված 16. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտների հաշվառումը**

1. Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամտի որոշման ժամանակ կիրառվում է հաշվառման հաշվեգրման եղանակը՝ իրավաբանական անձանց համար «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**Հոդված 17. Հարկվող օբյեկտի որոշման առանձնահատկությունները**

1. Ձեռնարկատիրական գործունեությունից եկամտային հարկի հարկվող օբյեկտի որոշման ժամանակ, բացի սույն օրենքով սահմանված նվազեցվող եկամուտներից, համախառն եկամուտը նվազեցվում է ձեռնարկատիրական գործունեությունից և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացման ենթակա եկամուտների հետ անմիջականորեն կապված և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով՝ ֆիզիկական անձի ներկայացրած տարեկան եկամուտների մասին հաշվարկի հիման վրա:
2. Ծախսերի թվին են դասվում մասնավորապես՝
1) նյութական ծախսերը.
2) աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները.
3) գործատուի կողմից վարձու աշխատողի համար կատարված կամավոր կուտակային կենսաթոշակային վճարումները՝ տվյալ վարձու աշխատողի աշխատավարձի 5 տոկոսը չգերազանցող մասով.
4) ամորտիզացիոն մասհանումները.
5) վարձակալական վճարները.
6) ապահովագրական վճարները.
7) չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները.
8) վարկերի և այլ փոխառությունների տոկոսները.
9) երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների և բանկային այլ ծառայությունների համար վճարները.
10) գովազդային ծախսերը.
11) ներկայացուցչական ծախսերը.
12) հովանավորչական ծախսերը.
13) դատական ծախսերը.
14) գործուղման ծախսերը.
15) պատճառած վնասի հատուցումը.

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԾՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

3. Տարեկան եկամուտների մասին հաշվարկի արդյունքներով հարկ վճարողի՝ բյուջե ավել վճարած (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով) հարկի գումարները ենթակա են վերադարձման հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

**Հոդված 24. Կրկնակի հարկման բացառումը**

1. Ռեզիդենտների՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս ստացված եկամտի գումարը ներառվում է Հայաստանի Հանրապետությունում հայտարարագրվող տարեկան եկամտի ընդհանուր գումարի մեջ և հաշվի է առնվում հարկի չափը որոշելիս:

2. Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների վճարած (գանձված) եկամտային հարկը պակասեցվում է հարկի այն գումարի չափով, որը նրանից գանձվել է օտարերկրյա պետություններում՝ դրանց օրենսդրությանը համապատասխան, բացառությամբ այն եկամուտներից օտարերկրյա պետություններում գանձված հարկի գումարի, որը, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, ենթակա է նվազեցման համախառն եկամտից: Ընդ որում, պակասեցվող (հաշվանցվող) հարկի գումարի չափը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված եկամտից՝ սույն օրենքի դրույթներին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում վճարման ենթակա հարկի գումարին:

## Գ Լ ՈՒ Խ 7
## *ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

**Հոդված 25. Սույն օրենքի խախտման համար ֆիզիկական անձանց և հարկային գործակալների պատասխանատվությունը**

1. Սույն օրենքի խախտման համար հարկ վճարողները և հարկային գործակալները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի դրույթների համաձայն՝ եկամտային հարկը աղբյուրի մոտ չպահելու (չգանձելու) դեպքում հարկային պարտավորությունը (այդ թվում՝ եկամտային հարկը սահմանված ժամկետներում բյուջե չվճարելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված տույժերը) կրում է հարկային գործակալը:

3. Հարկային գործակալի կողմից, սույն օրենքի դրույթների համաձայն, ֆիզիկական անձանց հաշվարկված եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին երեք ամսվա համար, իսկ հարկերի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք օրացուցային տարվա համար:

4. Հարկային մարմին ներկայացված եկամտային հարկի հաշվարկում սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավել ցույց տալու դեպքում անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ ավել ցույց տրված վնասի 26 տոկոսի չափով:

5. Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու դեպքում գործատուն տվյալ (արձանագրման) ամսում հաշվարկում և վճարում է այդ (չձևակերպված) վարձու աշխատողի համար եկամտային հարկ՝ 60.000 դրամի չափով: Նշված դրույթը չի կիրառվում վարձու աշխատողների աշխատանքային պայմանագրերի գրանցամատյանը, իսկ պետական մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում՝ աշխատանքի ընդունման և աշխատանքից ազատման հրամանագիրքը սահմանված կարգով չվարելու կամ սահմանված կարգի խախտումով վարելու դեպքերում (այդ դեպքում եկամտային հարկը հաշվարկվում (վերահաշվարկվում) է ընդհանուր սահմանված կարգով):

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից գործատուն իր միջոցների հաշվին կրում է վարձու աշխա-

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

6) *անձնավորված հաշվետվություն՝* Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ձևավորված և ներկայացված՝ սույն օրենքով սահմանված տվյալներ պարունակող էլեկտրոնային փաստաթուղթ.

7) գործատու՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված եկամտային հարկը պահող (գանձող) հարկային գործակալ:

***Հոդված 4. Անձնավորված հաշվառման նպատակներն ու խնդիրները***

1. Անձնավորված հաշվառման նպատակներն ու խնդիրներն են՝

1) հարկային օրենսդրության կիրառման և ֆիզիկական անձանց եկամուտների հարկման ճշտության ապահովումը.

2) մակրոտնտեսական ցուցանիշների վերլուծումը և հաշվարկ-կանխատեսումների իրականացումը.

3) կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի բնականոն գործունեության ապահովումը.

4) ֆիզիկական անձանց կենսաթոշակային իրավունքների իրականացման ապահովումը:

***Հոդված 5. Անձնավորված հաշվառման սկզբունքները***

1. Անձնավորված հաշվառման սկզբունքներն են՝

1) անհատական տվյալների հաշվառման անձնավորված լինելը.

2) եկամտային հարկ և պարտադիր կուտակային վճար վճարած յուրաքանչյուր ֆիզիկական անձի՝ անձնավորված հաշվառման համակարգում պարտադիր ընդգրկված լինելը.

3) իրեն վերաբերող տվյալների հասանելի լինելը ֆիզիկական անձին (տվյալների սուբյեկտին).

4) տեղեկատվական բազայում ներառված տվյալների օգտագործումը բացառապես օրենքով նախատեսված դեպքերում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

***Հոդված 6. Անձնավորված հաշվառում իրականացնող մարմինը***

1. Անձնավորված հաշվառումն իրականացնում է եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի հավաքագրում իրականացնող պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին):

***Հոդված 7. Տեղեկատվական բազայում ներառվող տվյալները***

1. Տեղեկատվական բազան ներառում է՝

1) ֆիզիկական անձանց վերաբերող հետևյալ տվյալները.

ա. ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը և տարին, անձի մահվան դեպքում՝ մահվան օրը, ամիսը և տարին,

բ. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի (մինչև 16 տարեկանների դեպքում՝ ծննդյան վկայականի) սերիան ու համարը, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի սերիան ու համարը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը տվող մարմնի ծածկագիրը,

գ. սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, հարկ վճարողի հաշվառման համարը (առկայության դեպքում),

դ. սեռը,

ե. բնակության վայրի հասցեն.

զ. քաղաքացիությունը.

2) աշխատողի դեպքում նաև՝

ա. աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու օրը, ամիսը, տարին,

բ. աշխատանքային հարաբերությունների ծագման հիմք համարվող փաստաթղթերի (պայմանագրի, հրամանի և այլնի) տվյալները, մասնագիտությունը (պաշտոնը),

գ. գործատուի (գործատուների) հարկ վճարողի հաշվառման համարը, լրիվ անվանումը, գտնվելու

վայրը կամ պետական գրանցման վայրի հասցեն, պետական ռեգիստրում գրանցման օրը, ամիսը, տարին և գրանցման համարը,

դ. եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարված եկամտային հարկի չափը՝ ըստ գործատուների և ըստ ամիսների,

ե. կուտակային վճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարված պարտադիր կուտակային վճարի չափը՝ ըստ գործատուների և ամիսների,

զ. կամավոր կուտակային վճարի չափը.

3) անհատ ձեռնարկատիրոջ դեպքում նաև՝

ա. պետական գրանցման օրը, ամիսը և տարին, պետական ռեգիստրում գրանցման համարը, ձեռնարկատիրական գործունեությունը դադարեցնելու օրը, ամիսը և տարին,

բ. ձեռնարկատիրական գործունեությունը ժամանակավորապես կասեցնելու (պետական գրանցման վկայականը հարկային մարմնին ժամանակավորապես հանձնելու) և ձեռնարկատիրական գործունեությունը վերսկսելու (պետական գրանցման վկայականը հարկային մարմնից ստանալու) օրը, ամիսը և տարին,

գ. եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած եկամտային հարկի չափը, հարկի վճարման օրը, ամիսը և տարին,

դ. կուտակային վճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած կուտակային վճարի չափը, կուտակային վճարը կատարելու օրը, ամիսը և տարին,

ե. վճարած եկամտային հարկի կանխավճարների չափը՝ ըստ եռամսյակների, վճարման օրը, ամիսը և տարին.

4) նոտարի դեպքում նաև՝

ա. պաշտոնում նշանակվելու և պաշտոնից ազատվելու օրը, ամիսը և տարին,

բ. եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած եկամտային հարկի չափը, հարկի վճարման օրը, ամիսը և տարին,

գ. կուտակային վճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած կուտակային վճարի չափը, կուտակային վճարը կատարելու օրը, ամիսը և տարին.

5) ինքնազբաղվածի դեպքում նաև՝

ա. գործունեության տեսակը,

բ. եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած եկամտային հարկի չափը, հարկի վճարման օրը, ամիսը և տարին,

գ. կուտակային վճարի հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի, հաշվարկված և վճարած կուտակային վճարի չափը, կուտակային վճարը կատարելու օրը, ամիսը և տարին,

դ. արտոնագրային վճար վճարողների կողմից վճարած արտոնագրային վճարի չափը, այն կատարելու օրը, ամիսը և տարին.

6) աշխատանքային ստաժում հաշվառվող՝ օրենքով սահմանված այլ գործունեության ժամանակահատվածների մասին տեղեկատվություն.

7) վճարված ժամանակավոր անաշխատունակության նպաստի, թաղման նպաստի գումարների չափերը, այդ գումարները վճարելու օրը, ամիսը և տարին:

### *Հոդված 8. Անհատական հաշիվը*

1. Անհատական հաշիվը յուրաքանչյուր ֆիզիկական անձի՝ տեղեկատվական բազայում ներառված անհատական տվյալների ամբողջությունն է:

2. Անհատական հաշիվ բացում է լիազոր մարմինը՝ ֆիզիկական անձի կողմից վճարներ կատարելու փաստի մասին տեղեկատվություն ստանալու հիման վրա՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացված անձնավորված հաշվետվությունում ներառված տվյալները:

3. Անհատական հաշիվ բացելու կարգը սահմանում է լիազոր մարմինը:

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

***Հոդված 14. Տեղեկատվական բազայից պետական մարմիններին և այլ կազմակերպություններին տվյալներ տրամադրելը***

1. Տեղեկատվական բազայից լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով տվյալներ է տրամադրում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած՝ կենսաթոշակային ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնին.

2) «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ մասնակիցների ռեեստրը վարողին.

3) Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կազմակերպություններին, պետական կառավարման այլ մարմիններին:

***Հոդված 15. Աշխատողների, ինքնազբաղվածների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների իրավունքները և պարտականությունները***

1. Աշխատողը, ինքնազբաղվածը, անհատ ձեռնարկատերը և նոտարը իրավունք ունեն՝

1) լիազոր մարմնից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով ստանալու իր անհատական հաշվի քաղվածքը՝ փաստաթղթային կամ էլեկտրոնային տեսքով.

2) իր անհատական հաշվում առկա անհատական տվյալները ճշտելու (ուղղելու) համար գրավոր դիմել լիազոր մարմնին կամ գործատուին.

3) գործատուից (հարկային գործակալից) անվճար ստանալու լիազոր մարմին ներկայացված իր անհատական տվյալների կրկնօրինակը.

4) դատական և վարչական կարգով բողոքարկել կամ վիճարկել լիազոր մարմնի կամ գործատուի (հարկային գործակալի) պաշտոնատար անձանց՝ իր անհատական հաշվում առկա տվյալներին առնչվող գործողությունները կամ անգործությունը:

2. Աշխատողը, ինքնազբաղվածը, անհատ ձեռնարկատերը և նոտարը պարտավոր են՝

1) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմին ներկայացնել սույն օրենքով սահմանված տվյալները.

2) լիազոր մարմնի պահանջով ներկայացնել անհատական հաշվում ներառելու ենթակա տվյալները հաստատող փաստաթղթեր.

3) գործատուին (հարկային գործակալին) և լիազոր մարմնին ըստ անհրաժեշտության ներկայացնել իրեն վերաբերող տվյալները հաստատող փաստաթղթեր:

***Հոդված 16. Գործատուի (հարկային գործակալի) իրավունքները և պարտականությունները***

1. Գործատուն (հարկային գործակալը) իրավունք ունի՝

1) իր աշխատողներից պահանջելու և ստանալու ներկայացված տվյալները հաստատող փաստաթղթեր.

2) սույն օրենքով սահմանված կարգով ճշտելու տեղեկատվական բազա ներառված՝ իր աշխատողներին վերաբերող տվյալները:

2. Գործատուն (հարկային գործակալը) պարտավոր է՝

1) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում լիազոր մարմին ներկայացնել սույն օրենքով սահմանված անձնավորված հաշվետվություն.

2) սույն օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում ներկայացնել նոր հաշվետվություն.

3) իր աշխատողի գրավոր դիմումի հիման վրա նրան անվճար տրամադրել լիազոր մարմին ներկայացված նրա անհատական տվյալների կրկնօրինակը.

4) տվյալները ներկայացնելիս ստուգել աշխատողի ներկայացրած սոցիալական ապահովության քարտի (կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի) տվյալների և նրա անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի տվյալների համապատասխանությունը:

# ԱՄՍԱԳՐԻ ԾՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄ

## ՄԻՆՉԵՎ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՏԵՂԵԿԱՆՔ**

- ✓ «Մինչև «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը (այսուհետ՝ Որոշում) ընդունվել է 2012 թվականի մայիսի 31-ին՝ Երևան քաղաքում: Հաշվառման համար N 692-Ն:
- ✓ Որոշումը ստորագրվել է 2012 թ. հունիսի 4-ին:
- ✓ Որոշումն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունիսի 23-ից:

Այսպես.

Հիմք ընդունելով «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշել է.

Սահմանել «Մինչև «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման կարգը՝ համաձայն ստորև ներկայացվող հավելվածի:

«Հավելված
ՀՀ կառավարության 2012 թվականի
մայիսի 31-ի N 692-Ն որոշման

## ԿԱՐԳ
## ՄԻՆՉԵՎ «ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են մինչև «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողներին հարկումից հետո վճարման ենթակա աշխատավարձի հիման վրա աշխատավարձի մեծության որոշման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի կիրառման իմաստով մինչև «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելը վարձու աշխատողին հարկումից հետո վճարման ենթակա՝

1) պաշտոնային դրույքաչափային աշխատավարձը որոշվում է գործատուի կողմից 2012 թվականի աշխատած լրիվ (ամբողջական) ամիսների ընթացքում վարձու աշխատողի համար հաշվարկված աշխատավարձի (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև սույն կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) և այդ աշխատավարձի ստացման լրիվ (ամբողջական) ամիսների թվի հարաբերությամբ.

2) ժամային կամ գործավարձային դրույքաչափերի հիման վրա հաշվարկվող աշխատավարձը որոշվում է գործատուի կողմից 2012 թվականի ընթացքում վարձու աշխատողի համար հաշվարկված աշխատավարձի (որը չի ներառում այդ աշխատավարձի մասով հաշվարկվող եկամտահարկը, վարձու աշխատողի հաշվին կատարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարը, ինչպես նաև սույն կարգի 3-րդ կետով սահմանված՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները) և այդ աշխատավարձի ստացման համար վարձու աշխատողի կողմից ծախսված ժամերի թվի կամ այդ աշխատավարձի ստացման համար վարձու աշխատողի կողմից կատարված աշխատանքի միավորների թվի հարաբերությամբ:

3. Սույն կարգի 2-րդ կետով սահմանված հաշվարկները կատարելիս՝ աշխատավարձում չներառվող՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող այլ միջոցներ և դրանց հավասարեցված եկամուտներ են համարվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան որոշակի ժամկետով (տնաշխատների հետ, համատեղությամբ, ժամանակավոր (մինչև 2 ամիս ժամկետով), սեզոնային) և անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերի շրջանակներում հետևյալ վճարումները (վարձատրությունը)՝

1) լրացուցիչ վարձատրությունը՝ ներառյալ՝

ա. արտաժամյա աշխատանքի վարձատրությունը,

բ. գիշերային աշխատանքի վարձատրությունը,

գ. ոչ աշխատանքային (հանգստյան, տոնական, հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը,

դ. լրավճարները, հավելավճարները (այդ թվում՝ դասային և հատուկ կոչումների, գիտական աստիճանների համար) և պարգևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

Այդ նպատակով նոր ընդունված որոշման համաձայն, նախատեսվում է՝

ա) վերոնշյալ երկու լիազորությունները համատեղել և վերապահել ներքին աուդիտորներին (ներքին աուդիտի ստորաբաժանումներին),

բ) ընկերություններում ներքին աուդիտի համակարգի ներդրման ժամանակացույցին համապատասխան դադարեցնել այդ ընկերություններում վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) ձևավորումը և գործունեությունը (այդ թվում՝ դադարեցնել վճարովիության սկզբունքով գործող վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) մրցույթների անցկացումը),

գ) մինչև ընկերություններում ներքին աուդիտի ներդրման ժամանակացույցով նախատեսված ժամկետների սկիզբը՝ օրենքի 91-րդ հոդվածի պահանջների կատարումն ապահովել լիազորված մարմինների աշխատակազմերից և (կամ) տվյալ ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված անձանցից ձևավորված վերստուգող հանձնաժողովների միջոցով,

դ) վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) և ներքին աուդիտորների լիազորությունների համատեղման արդյունքում աշխատանքից ազատված վճարովիության սկզբունքով գործող վերստուգող հանձնաժողովների անդամների և վերստուգողների մասնագիտական ունակություններն ու աշխատանքային փորձը օգտագործելու նպատակով նրանց նշանակել ուսուցանվող աուդիտորներ (մինչև համապատասխան որակավորում ստանալը):

Ստորև ներկայացվում է ՀՀ կառավարության «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) լիազորությունները բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումներին վերահսկելու կամ այդ մարմինների որոշմամբ մասնավոր ընկերություններին պատվիրելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թ. նոյեմբերի 21-ի N 1923-Ն ու 2005 թ. մայիսի 19-ի N 1187-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշումն ամբողջությամբ:

Այսպես.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մայիսի 2012 թվականի N 732 - Ն

## 50 ՏՈԿՈՍ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂՆԵՐԻ) ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ԿԱՄ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՄԲ ՄԱՍՆԱՎՈՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1923-Ն ՈՒ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի N 1187-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման և ստուգման գործընթացների համակարգման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի «Ներքին աուդիտի գործընթացի կազմակերպման, «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազոր մարմնի սահմանման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի N 503-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1233-Ն որոշման N 3 հավելվածի ժամանակացույցի 2-րդ և 3-րդ կետերին համապատասխան՝ 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություններում (այսուհետ՝ ընկերություններ)

ներքին աուդիտի համակարգի ներդրման օրվանից՝ այդ կազմակերպություններում վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների)՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 91-րդ հոդվածով սահմանված լիազորությունների կատարումը վերապահվում է ընկերությունների բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինների ներքին աուդիտի ստորաբաժանումներին:

2. Ներքին աուդիտի ոլորտի լիազոր մարմնի կողմից հաստատված կարգով և սահմանված դեպքերում բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինը կարող է ընդունել որոշում ներքին աուդիտի ծառայությունները մասնավոր ընկերություններին պատվիրելու վերաբերյալ: Մասնավոր կազմակերպություններին ներքին աուդիտի ծառայությունները կարող են պատվիրվել միայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 21-ի «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) գործունեության նկատմամբ հսկողության իրականացման կարգը հաստատելու մասին» N 1923-Ն և 2005 թվականի մայիսի 19-ի «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) ձևավորումը և գործունեությունը կանոնակարգելու մասին» N 1187-Ն որոշումները՝

1) 2011 թվականի ընթացքում 500 մլն դրամը գերազանցող շրջանառություն կամ համախառն եկամուտ ունեցող ընկերությունների մասով՝ 2012 թվականի հուլիսի 1-ից.

2) 2011 թվականի ընթացքում մինչև 500 մլն դրամ շրջանառություն կամ համախառն եկամուտ ունեցող ընկերությունների մասով՝ 2013 թվականի հունվարի 1-ից:

4. Ընկերությունների բաժնետոմսերի կառավարման լիազորություն ունեցող պետական կառավարման մարմինների ղեկավարներին՝

1) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի «50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) ձևավորումը և գործունեությունը կանոնակարգելու մասին» N 1187-Ն որոշման 2.1–ին կետը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից դադարեցնել վճարովիության սկզբունքով գործող վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) ընտրության մրցույթների անցկացումը.

2) իրենց համակարգի ընկերություններում վճարովիության սկզբունքով գործող վերստուգող հանձնաժողովների անդամների և վերստուգողների լիազորությունների եռամյա ժամկետի ավարտից կամ նրանց հետ կնքված աշխատանքային պայմանագրերի վաղաժամկետ դադարեցումից հետո, մինչև սույն որոշման 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված ժամկետների ավարտը, վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) լիազորությունների կատարումը դնել իրենց աշխատակազմերի աշխատողներից և (կամ) տվյալ ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված այլ անձանցից ձևավորված վերստուգող հանձնաժողովների վրա, որոնք կգործեն հասարակական հիմունքներով.

3) մինչև սույն որոշման 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված ժամկետների ավարտը՝ ապահովել այդ ժամկետների համար վերստուգող հանձնաժողովների (վերստուգողների) 2012 թվականի աշխատանքային ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվետվություններն ու եզրակացությունները Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնելը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2012 թ. հունիսի 19
Երևան

# ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԻՐ

# Հարկային օրացույց

## Չրք 1 — Եկամտահարկի հաշվարկ ներկայացնելը

2012թ. II եռամսյակի յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված (աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների դեպքում՝ հաշվարկված) եկամուտների, պահված և բյուջե փոխանցված եկամտահարկի գումարների մասին հաշվարկ ներկայացնելու վերջնաժամկետ («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ կետ)

## Երք 7 — Վիճակագրական ծառայության տեղեկություններ ներկայացնելը

2011թ. հուլիս ամսվա համար վիճակագրական ծառայության տեղեկություններ ներկայացնելու վերջնաժամկետ

## ՀԴՄ-ի հաշվետվություն

2012թ. հուլիս ամսվա ՀԴՄ-ով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն ներկայացնելու վերջնաժամկետ («Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ե կետ):

## Երք 14 — Պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարում

Անհատ ձեռնարկատերերի (ձեռներեցների) կողմից 2012թ. հուլիս ամսվա համար նվազագույն պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարման վերջնաժամկետ («Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետ)

## ԱՎՈՒՄ-ի վճարման վերջնաժամկետ

Հուլիս ամսվա աշխատավարձի վճարման վերջնաժամկետ (ՀՀ ԱՕ 192-րդ հոդվածի 1-ին մաս)

Չոք 15

## Հաստատագրված վճարների ելակետային տվյալների մասին հայտարարություն ներկայացնելը

2012թ. հուլիս ամսվա խաղարկությունով և ոչ խաղարկությունով, ինչպես նաև համակցված վիճակախաղերի իրականացման դեպքում հաստատագրված վճար վճարողների համար ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետ)

## Հաստատագրված վճարների վճարում

2012թ. հուլիս ամսվա հաստատագրված վճարների վճարման վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված 1-ին կետ)

Երկ 20

## Եկամտահարկի վճարում

2012թ. հուլիս ամսվա համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումներից պահված եկամտահարկի վճարման վերջնաժամկետ («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված)

Հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց 2012թ. հուլիս ամսվան վճարած եկամուտներից պահված (գանձված) եկամտահարկի վճարման վերջնաժամկետ («Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդված)

## Շահութահարկի վճարում

2012թ. հուլիս ամսվա ընթացքում հարկային գործակալի կողմից ոչ ռեզիդենտից գանձված շահութահարկի գումարների բյուջե վճարման վերջնաժամկետ («Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդված)

## Պարտադիր սոցիալական ապահովության վճարների վճարում

Գործատուների կողմից 2012թ. հուլիս ամսվա պարտադիր սոցիալական ապահովության վճարի վճարման վերջնաժամկետ («Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված 1-ին կետ)

## Ավելացված արժեքի հարկի հաշվարկ ներկայացնելը (այն անձանց համար, որոնց հաշվետու ժամանակաշրջանը համարվում է ամիսը)

✓ 2012թ. հուլիս ամսվա ԱԱՀ-ի հաշվարկի ներկայացնելու վերջնաժամկետ («Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված)

✓ 2012թ. հուլիս ամսում դուրս գրված և ստացված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկանքի ներկայացման վերջնաժամկետ («Ավելացված արժեքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված)

## Ավելացված արժեքի հարկի վճարում (այն անձանց համար, որոնց հաշվետու ժամանակաշրջանը համարվում է ամիսը)

2012թ. հուլիս ամսվա համար հաշվարկված ԱԱՀ-ի վճարման վերջնաժամկետ («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդված)

## Ակցիզային հարկի վճարում

2012թ. հուլիս ամսվա ակցիզային հարկի վճարման վերջնաժամկետ («Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ կետ)

## Հաստատագրված վճարների մասին տեղեկություններ ներկայացնելը

Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն իրականացնող հարկ վճարողների կողմից 2012թ. հուլիս ամսվա ընթացքում իրենց կողմից իրացված գազի ֆիզիկական ծավալների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ կետ)

Ուրբ 31

## Հաստատագրված վճարների ելակետային տվյալների մասին հայտարարություն ներկայացնելը

2012թ. սեպտեմբեր ամսվա տոտալիզատորի, ինտերնետ տոտալիզատորի և ինտերնետ շահումով խաղերի գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) մասով ելակետային տվյալների հայտարարության ներկայացնելու վերջնաժամկետ («Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետ)



# 2012 Թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀԻ ՄՐՑՈՒՅԹ. III ՓՈՒԼ

«Գործք» ամսագիրը շարունակում է «2012 թվականի Հայաստանի Հանրապետության լավագույն հաշվապահի» անվանակարգում հայտարարված մրցույթը:

Մրցույթի մասնակիցներին առաջարկվում է մեկ հարցաշար:

Հարցաշարի յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 20 միավոր:

Այսպես, հարցաշարից՝

- ✓ մինչև 6 միավոր հավաքելու դեպքում ունեք վերամասնագիտացման կարիք,
- ✓ 7-12 միավոր հավաքելու դեպքում՝ վերապատրաստման կարիք,
- ✓ 13-18 միավոր հավաքելու դեպքում՝ որակավորման բարձրացման կարիք,
- ✓ 19-20 միավոր հավաքելու դեպքում ունեք լավ որակավորում:

Հարցաշարից 18-20 միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակից լինի հաղթողի որոշման գործընթացին:

Ստորև ներկայացվող հարցաշարի պատասխաններն ուղարկել **press@gortsq.am** էլեկտրոնային հասցեին մինչև 2012 թվականի օգոստոսի 19-ը: Հարցաշարի ճիշտ պատասխանները կտեղադրվեն **www.gortsq.am** կայքէջում 2012 թվականի օգոտոսի 20-ին:

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ*** – Մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2013 թվականի փետրվարին Ծաղկաձորում:

## 1. Հարկային օրենսդրությամբ սահմանված՝ հարկային արտոնության տեսակ չէ՝

ա) հարկի դրույքաչափի նվազեցումը,
բ) հարկից ազատումը,
գ) հարկի վճարման ժամկետի հետաձգումը:

## 2. Ստորև նշված դրույթներից որն է ճշմարիտ՝

ա) հաստատագրված վճարի գումարի մեջ ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60 տոկոսի չափով,
բ) հաստատագրված վճարի համար հարկման բազա է համարվում օրենքի 7 հոդվածով նախատեսված գործունեության տեսակների համար սահմանված ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների որոշակի արտադրյալը՝ դրամական արտահայտությամբ,
գ) սահմանային չափը գերազանցելու դեպքերում ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվողների համար ավելացված արժեքի հարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 0 տոկոս:

## 3. Հողի հարկ վճարողներ են հանդիսանում.

ա) հողի վարձակալները,
բ) հողի սեփականատերերը, ինչպես նաև պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողները,
գ) միայն հողի սեփականատերերը:

## 4. Ստորև նշված դրույթներից որն է ճշմարիտ՝

ա)հաշվետու տարվա ընթացքում արտոնություն ունեցող գույքահարկ վճարողը գույքահարկը վճարելուց ազատվում է արտոնության իրավունքը ստանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից,
բ) հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի արտոնությունը դադարելու դեպքում գույքահարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից,
գ) հաշվետու տարվա ընթացքում գույքահարկի արտոնությունը դադարելու դեպքում գույքահարկը հաշվարկվում է արտոնության իրավունքը դադարելու ամսվա 1-ից:

## 5. Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին օրենքի համաձայն նախորդ ամսվա ընթացքում յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացնում.

ա) ԱԱՀ վճարող չհամարվող անհատ ձեռնարկատերերը,
բ) արտոնագրային վճար վճարողները,
գ) արտոնագրային վճարների մասին օրենքի N 1 և N 2 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող արտոնագրային վճար վճարող համարվող անհատ ձեռնարկատերերը:

## 6. Ստորև նշված դրույթներից որն է կեղծ՝

ա) հաստատագրված վճար վճարող անհատ ձեռնարկատերերի կողմից ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամուտը հանդիսանում է պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման օբյեկտ,

բ) հաստատագրված վճար վճարող անհատ ձեռնարկատերերի կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման համար հաստատագրված վճարի գումարը ձեռնարկատիրական գործունեությունից ստացված համախառն եկամուտից նվազեցման ենթակա է:

գ) հաստատագրված վճար վճարող անհատ ձեռնարկատերերի կողմից պարտադիր սոցիալական ապահովության վճարների հաշվարկման համար համախառն եկամտի մեջ ներառվում են հաստատագրված վճարով հարկվող գործունեությունից ստացված եկամուտները և համախառն եկամտից նվազեցվում են այդ եկամուտների ստացման հետ կապված ծախսերը:

## 7. Հարկվող շահույթը որոշելիս հիմնական միջոցների վերագնահատման արդյունքները

ա) հաշվի են առնվում,

բ) հաշվի են առնվում միայն օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման դեպքում,

գ) հաշվի չեն առնվում:

## 8. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը ապրանքի մատակարարում համարվող և ԱԱՀ-ով հարկման ենթակա գործարքների մասով՝

ա) հարկային հաշիվներ դուրս չեն գրում,

բ) դուրս են գրում հարկային հաշիվներ, եթե գնորդը պահանջել է ,

գ) դուրս են գրում հարկային հաշիվներ, եթե գնորդը պահանջել է, և եթե այդ ֆիզիկական անձն ունի հարկ վճարողի հաշվառման համար:

## 9. Ավելացված արժեքի հարկի կիրառման առումով ստորև ներկայացված որ ծառայության մատուցման վայրն է համարվում Հայաստանի Հանրապետությունը՝

ա) Հայաստանի Հանրապետությունում գրանցված անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում չգրանցված օտարերկրյա անձանց մատուցվող խորհրդատվական ծառայություններ,

բ) Հայաստանի Հանրապետության անձանց օտարերկրյա պետությունում սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի վարձակալության տրամադրում,

գ) Հայաստանի Հանրապետությունում չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված անձանց մատուցվող գովազդային ծառայություններ:

## 10. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ավելացված արժեքի հարկով հարկվող շրջանառություն է համարվում՝

ա) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը և դրանց համար գանձվող մաքսատուրքը,
բ) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը, դրանց համար գանձվող ակցիզային հարկի գումարը և մաքսատուրքերը,
գ) ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը և դրանց համար գանձվող ակցիզային հարկի գումարը:

## 11. Ֆինանսական վարձակալության գծով չվաստակած ֆինանսական եկամտի արտացոլում՝

ա) դեբետ 146 «Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք համախառն մուտքեր»
կրեդիտ 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»,
բ) դեբետ 119 «Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոցներ»
կրեդիտ 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»,
գ) դեբետ 147 «Չվաստակած ֆինանսական եկամուտ ամորտիզացված արժեքով հաշվառվող երկարաժամկետ ֆինանսական ակտիվների գծով»
կրեդիտ 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ»:

## 12. Շենքի ձեռքբերման նպատակով կանխավճարի արտացոլում՝

ա)դեբետ 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ»
կրեդիտ 252 «Հաշվարկային հաշիվ»,
բ) դեբետ 523 «Ստացված կանխավճարներ»
կրեդիտ 252 «Հաշվարկային հաշիվ»,
գ) դեբետ 152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար»
կրեդիտ 252 «Հաշվարկային հաշիվ»:

## 13. Ստացվելիք հայտարարված շահաբաժինների արտացոլում՝

ա) դեբետ 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով»
կրեդիտ 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ»,
բ) դեբետ 529 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին (հիմնադիրներին)»
կրեդիտ 627 «Ֆինանսական ներդրումներից եկամուտներ»,
գ) դեբետ 252 «Հաշվարկային հաշիվ»
կրեդիտ 222 «Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով»:

## 14. Հիմնական արտադրությունում զբաղված աշխատակիցներին վճարման ենթակա ժամանակավոր անաշխատունակության նպաստների արտացոլում՝

ա) դեբետ 525 «Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով»
կրեդիտ 527 «Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»,

բ) դեբետ 811 «Հիմնական արտադրություն»
կրեդիտ 527 «Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»,

գ) դեբետ 711 «Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք»
կրեդիտ 527 «Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով»:

## 15. Հումքի իրացումից հասույթի արտացոլում՝

ա) դեբետ 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
կրեդիտ 614 «Գործառնական այլ եկամուտներ»,

բ) դեբետ 221«Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
կրեդիտ 611«Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ,

գ) դեբետ 221«Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»
կրեդիտ 211 «Նյութեր»:

## 16. Համաձայն ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտի, նշված ակտիվներից որը չի դասակարգվի որպես պաշար՝

ա) անավարտ արտադրանքը, որը նախատեսվում է ավարտուն վիճակի հասցնել հաշվետու ամսաթվից հետո՝ ավելի քան մեկ տարվա ընթացքում,

բ) այն ակտիվները, որոնք արտահայտված են նյութերի տեսքով արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար,

գ) այն առարկաները, որոնց գումարը էական չէ և որոնք նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում:

## 17. Համաձայն ՀՀՄՍ 7 «Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի մասին» ստանդարտի, արտադրական կազմակերպությունում նշվածներից որը չի համարվում ֆինանսական գործունեություն՝

ա) կազմակերպության կողմից պարտատոմսերի տեղաբաշխումը,

բ) այլ կազմակերպությանը փոխառության տրամադրումը,

գ) բաժնետոմսերի հետ գնումը:

**18.** Համաձայն ՀՀՄՍ 10 «Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր» ստանդարտի, նշվածներից որոնք չեն համարվում հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի և ֆինանսական հաշվետվությունների ներկայացնելու համար վավերացման ամսաթվի միջև տեղի ունեցած ճշգրտող դեպքեր՝

ա) ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջանի արդյունքներով շահաբաժինների հայտարարումը,
բ) տեղեկատվության ստացումը, որը ցույց է տալիս, որ դեբիտորական պարտքը հաշվապահական հաշվեկշռի դրությամբ անհավաքագրելի էր,
գ) դատարանի վճիռը ի վնաս կազմակերպության, որը հաստատում է, որ կազմակերպությունը հաշվապահական հաշվեկշռի դրությամբ արդեն ուներ պարտավորություն, որը մինչև հաշվեկշռի ամսաթիվը ճանաչված չէր:

**19.** Համաձայն ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր» ստանդարտի, նշված պայմաններից որն է պարտադիր, որպեսզի լրացուցիչ ակտիվի կառուցումը դիտվի որպես կառուցման առանձին պայմանագիր՝

ա) այդ ակտիվի կառուցման ժամկետների վերաբերյալ տարվել են առանձին բանակցություններ,
բ) պայմանագրերն իրագործվում են միաժամանակ կամ չընդհատվող հաջորդականությամբ,
գ) ակտիվի գնի վերաբերյալ բանակցությունները տարվում են անկախ սկզբնական պայմանագրի գնից:

**20.** Համաձայն ՀՀՄՍ 12 «Շահութահարկ» ստանդարտի, հետաձգված հարկային ակտիվները (պարտավորությունները) հաշվապահական հաշվեկշռում ներկայացվում են՝

ա) որպես ընթացիկ ակտիվներ (պարտավորություններ), եթե ակնկալվում է, որ շահութահարկի գումարները կփոխհատուցվեն (կվճարվեն) հաշվետու ամսաթվից հետո մեկ տարվա ընթացքում, հակառակ դեպքում՝ որպես ոչ ընթացիկ ակտիվներ (պարտավորություններ),
բ) որպես ընթացիկ ակտիվներ (պարտավորություններ),
գ) որպես ոչ ընթացիկ ակտիվներ (պարտավորություններ):

## «2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Գործք» ամսագրի կողմից հայտարարված «2012 թվականի ՀՀ լավագույն հաշվապահ» մրցույթի ընտրական երկրորդ փուլի վերաբերյալ 2012 թվականի ապրիլի 20-ից մինչև մայիսի 30-ն ընկած ժամանակահատվածում press@gortsq.am էլեկտրոնային հասցեով ստացվել է 138 պատասխան:
Խնդրից վաստակած միավորները բաշխվել են հետևյալ կերպ՝

- ✓ 0 - 9 միավոր են վաստակել 129 մասնակից.
- ✓ 10-12 միավոր՝ 4 մասնակից.
- ✓ 13 -15 միավոր՝ 5 մասնակից.
- ✓ 16 - 20 միավոր վաստակած մասնակիցներ չկան:

# «2012 թ. ՀՀ լավագույն հաշվապահ» մրցույթի երկրորդ փուլից առավել բարձր միավոր վաստակած մասնակիցները

Դավիթ Գասպարյան
«էմ Չի էֆ» գրուպ ՍՊԸ-ի
գլխ. մասնագետ
(15) միավոր

Մերի Մկրտչյան
«Ապրիկոտ քոնսալթինգ» ՍՊԸ-ի
հաշվ. խմբի ղեկավար
(15) միավոր

Լուսինե Զուրաբյան
ՀՀ կենտրոնական
բանկի հաշվապահ
(15) միավոր

Արթուր Գևորգյան
«էլեկտրասեվկավմոնտաժ»,
«էլեկտրո-տեխնիկական
սարքավորումների մոնտաժման և
կարգաբերման ձեռնարկություն» ՍՊԸ-ի
գլխավոր հաշվապահ
(15) միավոր

Անուշ Հակոբյան
«Ռան-Օյլ» ՍՊԸ-ի
գլխավոր հաշվապահ
(15) միավոր

Ռուզաննա Ղավալյան
«Կասկադ
Ինվեստմենտս» ՓԲԸ-ի
գլխավոր հաշվապահ
(12) միավոր

Արփինե Մխիթարյան
«Քասախ Ռեմդետալ» ՍՊԸ-ի
գլխավոր հաշվապահ
(12) միավոր

Ալլա Բերուջանյան
«ԴԻ ԷՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ի
գլխավոր հաշվապահ
(10) միավոր

Դավիթ Նիկողոսյան
«Գարանտ ըքաունթ
քոնսալթինգ» ՍՊԸ-ի
հաշվապահ
(10) միավոր

ԿԱԴՐԱՅԻՆ
ԱՌԵՎՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ

# ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

*Խոսք սույն էջի պատասխանատու, «Գործք» ամսագրի իրավական փորձաքննության կլինիկայի փորձագիտական խմբի*

Աշխատանքի իրավական կազմակերպումը հիմնականում իրականացվում է աշխատանքային և հարկային օրենսդրություններով: Եթե աշխատանքային օրենսդրությամբ կարգավորվում է գործատու - վարձու աշխատող իրավահարաբերությունը, ապա հարկային օրենսդրությամբ՝ գործատու - վարձու աշխատող – պետություն իրավահարաբերությունը: Աշխատանքային և հարկային ոլորտի ցանկացած բնույթի չկանոնակարգվածություն կամ բացթողում, տարընթերցում կամ հակասություն անմիջապես բացասական ազդեցություն է ունենում գործատու - վարձու աշխատող – պետություն իրավահարաբերության վրա՝ առաջ բերելով մասնակիցներից որևէ մեկի իրավունքի ոտնահարում: Աշխատանքային և հարկային ոլորտներում պետության հիմնական առաքելությունն է իր մարմինների միջոցով մշակել տվյալ բնագավառները կարգավորող օրենսդրությունը, հսկողություն սահմանել դրանց կիրառման նկատմամբ և պատասխանատվության միջոցներ կիրառել այն սուբյեկտների նկատմամբ, որոնք խախտում են օրենսդրության պահանջները: Ինչպես նկատում ենք, օրենսդրության մշակման և պատասխանատվության միջոցների կիրառման միջև կան ուղղակի կապեր: Գաղտնիք չէ, որ տարընթերցվող, միմյանց հակասող, տարբեր մեկնաբանությունների տեղի տվող, ոչ հստակ և անորոշ ձևակերպումներ պարունակող իրավական ակտերը, նրանում պարունակող նորմերը և պարբերությունները պարարտ հող են ստեղծում տվյալ օրենսդրությունը կիրառող սուբյեկտներին ստուգող պետական մարմինների համար՝ առաջ բերելով կոռուպցիոն ռիսկեր: Տարընթերցվող, տարբեր մեկնաբանություններ ունեցող իրավական նորմերի կիրառման ցանկացած ձև, ստուգող մարմինների ներկայացուցիչների կողմից կարող է համարվել իրավական նորմի ոչ պատշաճ կատարում և որակվել որպես օրենսդրության պահանջների խախտում, քանի որ տվյալ իրավական նորմը թույլ է տալիս այն մեկնաբանել յուրովի՝ սե-

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

| h/h | Աշխատանքային օրենսգրքի գործող կառուցվածքը | Աշխատանքային օրենսգրքի առաջարկվող կառուցվածքը |
|---|---|---|
| 1. | Ընդհանուր դրույթներ | Ընդհանուր դրույթներ |
| 2. | Կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններ | Անհատական աշխատանքային հարաբերություններ |
| 3. | Անհատական աշխատանքային հարաբերություններ | Կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններ |

ցումով նշվում է աշխատանքային օրենսդրության նպատակը, սկզբունքները և ոլորտները: Ավելին՝ օրենսգրքի 4-րդ հոդվածը կաղում է նաև ներքին կառուցվածքային աններդաշնակությունից: Նրանում ներառված դրույթները ներկայացված են ոչ այնպիսի հերթականությամբ, ինչպիսի հերթականությամբ դրանք սահմանված են հատուկ բաժնում:

**ԴԻՏԱՐԿՈՒՄ 3**
**ՀՀ աշխատանքային օրենսգրքում նոր հոդված լրացնելու անհրաժեշտության վերաբերյալ**

Օրենսգրքի 151-րդ հոդվածը բաղկացած է 1 մասից, որն ունի 5 կետ: 1-4-րդ կետերով սահմանված հասկացությունները բացված են Օրենսգրքի 152-155-րդ հոդվածներով: Տրված են դրանց սահմանումները, տրամադրման կարգն ու տևողությունը: Մինչդեռ 5-րդ կետը, որը վերաբերում է ամենամյա հանգստին (ոչ աշխատանքային՝ տոնական ու հիշատակի օրեր, արձակուրդ) Օրենսգրքի հետագա տեքստում բացված չէ կամ, ուրիշ խոսքով, ամենամյա հանգստի տեսակները դասակարգող հոդված Օրենսգրքով սահմանված չէ, որի հետևանքով խախտվել է իրավական ակտի դիալեկտիկական ըմբռնումը:

Առաջարկվում է Օրենսգիրքը լրացնել նոր 155[1] –րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

**«155[1]. Ամենամյա հանգիստը**

Ամենամյա հանգստի տեսակներն են.

ա) ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերը,

բ) ամենամյա վճարովի արձակուրդը,

գ) նպատակային արձակուրդները:»

# «ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ»

Հարգելի ընթերցող,

Շարունակում ենք «Կադրային քաղաքականություն» բաժնում ներկայացնել աշխատանքային պայմանագրի լուծման իրավական հիմքերը, դրանց իրավակիրառական, կադրային գործավարության և փաստաթղթաշրջանառության կազմակերպման հիմնական առանձնահատկությունները:

Աշխատանքային հարաբերությունները ծագում են կողմերի բացարձակ կամ ազատահայտությամբ, հետևաբար, կողմերից յուրաքանչյուրն օրենքով նախատեսված կարգով իրավունք պետք է ունենա սեփական ցանկությամբ (կամքով) լուծելու աշխատանքային պայմանագիրը՝ կաշկանդված չլինելով աշխատանքային իրավահարաբերության մյուս մասնակցի ցանկությունից կամ կամքից:

Մեր կողմից կատարված ընտրանքային ուսումնասիրությունները ցույց են տվել, որ չնայած հայաստանյան աշխատաշուկայի բարձր լարվածությանը, կոշտ մրցակցությանը (մեկ աշխատատեղի նկատմամբ պահանջարկի հարաբերակցությունը կազմում է 1/120-ի կամ այլ կերպ ասած մեկ աշխատատեղը զբաղեցնելու համար մրցակցում են 120 աշխատանք փնտրողներ), ազատ աշխատատեղերի գրեթե բացակայությանը, նոր աշխատատեղերի ստեղծման ցածր տեմպերը, գործազրկության բարձր մակարդակը, այնուամենայնիվ, աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման իրավական հիմքը դեռևս համարվում է մերօրյա աշխատանքային հարաբերությունների դադարման առավել հաճախ հանդիպող ձևերից մեկը: Սա, ի տարբերություն զարգացած աշխատաշուկաներ ունեցող արևմտյան երկրների, Հայաստանի աշխատաշուկային և առհասարակ հետխորհրդային պետությունների աշխատաշուկաներին բնորոշ իրավիճակ է: Այն կարող է ունենալ մի քանի բացատրություն, որից ամենակարևորը ցածր աշխատավարձն է, աշխատանքի ոչ բարենպաստ պայմանները, աշխատաժամանակի տևողության և աշխատավարձի չափի անհամաչափությունը և այլն: Սակայն աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերության դադարման օրենսդրությամբ սահմանված գործընթացի ձգձգվածության պատճառով (առնվազն 30 օր առաջ աշխատողը պետք է տեղեկացնի գործատուին աշխատանքային պայմանագիրը լուծելու իր մտադրության մասին) աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման դեպքը աստիճանաբար իր տեղը զիջում է կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման առավել ընդունելի դեպքին: Փաստորեն ստացվում է այնպես, որ եթե կողմերը համաձայնության չեն գալիս աշխատանքային պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելու շուրջ, ապա կարելի է ասել՝ միայն այս դեպքում աշխատողն օգտվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով իր համար նախատեսված իրավունքից աշխատանքային պայմանագիրը լուծում է իր նախաձեռնությամբ:

Այս համարում ներկայացնում ենք աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի (նախքան գործողության ժամկետի լրանալը) լուծման (այսուհետև՝ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծում) իրավական կարգավորման կառուցակարգերը:

Աշխատանքային պայմանագրի լուծման

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

## 2. ԱՇԽԱՏՈՂԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի (նախքան գործողության ժամկետի լրանալը) լուծման իրավական հիմքերը սահմանված են՝

ա) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,

բ) ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածով:

2. Աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի (նախքան գործողության ժամկետի լրանալը) լուծման կադրային գործավարության առանձնահատկություններն են՝

ա) աշխատողը աշխատանքային պայմանագիրը լուծելու իր մտադրության մասին՝ ծանուցում պետք է ներկայացնի գործատուին աշխատանքային պայմանագիրը լուծելու օրվանից առնվազն 30 օր առաջ,

բ) կարող է նախատեսվել գրավոր ծանուցման 5 օրյա ժամկետ,

գ) աշխատողի կողմից ներկայացվող ծանուցումն իմպերատիվ ոճի է, ունի տեղեկատվության և իրազեկման բնույթ և բոլորովին էլ կախված չէ գործատուի ցանկությունից,

դ) աշխատողն իրավունք ունի գրավոր ծանուցումը հետ վերցնել: Իրավական հետևանքներ չի առաջացնում, եթե աշխատողը գրավոր ծանուցումը հետ է վերցնում այն ներկայացնելուց հետո 3 օրվա ընթացքում: Նշված ժամկետից հետո նա կարող է ծանուցումը հետ վերցնել միայն գործատուի համաձայնությամբ:

ե) վերջնահաշվարկ կատարվում է աշխատանքային պայմանագրի լուծման օրը,

զ) լիակատար նյութական պատասխանատվություն ունեցող աշխատողի հետ գործատուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը պարտավոր է ծանուցման ժամանակահատվածում կազմակերպել աշխատողի պատասխանատվության տակ գտնվող ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունում : Ծանուցման ժամկետն ավարտվելուց և աշխատանքային պայմանագիրը լուծվելուց հետո աշխատողը պատասխանատվություն չի կրում մինչև աշխատանքային պայմանագրի լուծումն իր տնօրինման տակ գտնվող ապրանքանյութական արժեքների համար,

է) աշխատանքային գրքույկում աշխատանքից ազատման հիմքի մասին որևէ նշում չի կատարվում, եթե այդ մասին աշխատողը գործատուին նման պահանջ չի ներկայացրել,

## 3. ԱՇԽԱՏՈՂԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (ՆԱԽՔԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԼՐԱՆԱԼԸ) ԼՈՒԾՈՒՄԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Աշխատողի նախաձեռնությամբ անորոշ և որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի (նախքան գործողության ժամկետի լրանալը) լուծումը հիմնավորող փաստաթղթերի տեսակներն են՝

1. **Ծանուցում**՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին (30 օր առաջ),
2. **Ծանուցում**՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին (5 օր առաջ),
3. **Աշխատանքից ազատման թերթիկ**՝ կազմակերպության նկատմամբ աշխատանքից ազատվողի պարտք ու պահանջի մասին,
4. **Հրաման**՝ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին:

## *4. ԱՇԽԱՏՈՂԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ (ՆԱԽՔԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԼՐԱՆԱԼԸ) ԼՈՒԾՈՒՄԸ ՀԻՄՆԱՎՈՐՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ*

*Օրինակելի ձև*

**Գրություն կազմակերպության տնօրենին**

(գրությունը ներկայացնում է իր նախաձեռնությամբ աշխատանքից ազատվող աշխատողը)

---------- - ի տնօրեն

(նշել կազմակերպության անվանումը)

պարոն (տիկին) ---------- -ին

(նշել անունը, ազգանունը)

---------- - ից

(նշել աշխատողի անունը,ազգանունը)

**Ծ Ա Ն Ու Ց Ու Մ**

Հարգելի պարոն (տիկին)----------

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երեսուն օր առաջ տեղեկացնում եմ, որ 201-թ. ---------- « -- » - ին լուծելու եմ իմ և ---------- (նշել կազմակերպության անվանումը) միջև 20--թ. ---------- «--- » - ին կնքված թիվ ------- աշխատանքային պայմանագիրը (գործատուի անհատական իրավական ակտով աշխատանքի ընդունված աշխատողի դեպքում գրվում է «աշխատանքից ազատվելու եմ» արտահայտությունը):

Կազմակերպության աշխատակից՝

_____ ----------

(անուն ազգանուն) (ստորագրություն)

201-թ.---------- «----------»

---

*Օրինակելի ձև*

**Գրություն կազմակերպության տնօրենին**

(գրությունը ներկայացվում է իր նախաձեռնությամբ աշխատանքից ազատվող աշխատողը)

---------- - ի տնօրեն

(նշել կազմակերպության անվանումը)

պարոն (տիկին) ---------- -ին

(նշել անունը, ազգանունը)

---------- - ից

(նշել աշխատողի անունը,ազգանունը)

**Ծ Ա Ն Ու Ց Ու Մ**

Հարգելի պարոն (տիկին)----------

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հինգ օր առաջ տեղեկացնում եմ, որ իմ և ---------- (նշել կազմակերպության անվանումը ) միջև 20-թ. ------- «---» -ին կնքված թիվ ---- աշխատանքային պայմանագիրը 201-թ. -------- «-- »-ին համարելու եմ լուծված ---------- պատճառով[5] (գործատուի անհատական իրավական ակտով աշխատանքի
(նշել աշխատանքից ազատման պատճառը)
ընդունված աշխատողի դեպքում գրվում է «աշխատանքից ազատվելու եմ» արտահայտությունը):

Կազմակերպության աշխատակից՝

---

(անուն ազգանուն) _____

(ստորագրություն)

201-թ. ---------- «----»

[5] Նշել ներկայացվածից որևէ մեկը՝ իմ աշխատանքի կատարմանը խոչընդոտող հիվանդության կամ աշխատանքային խեղման, կամ գործատուի կողմից աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու, օրենքը կամ կոլեկտիվ պայմանագիրը խախտելու, կամ այլ պատճառով:

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

## 5. ԱՇԽԱՏՈՂԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐՈՒՄ ԱՌԿԱ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՏԱՐԸՆԹԵՐՑՎՈՂ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ «ԳՈՐԾՔ» ԱՄՍԱԳՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատողի նախաձեռնությամբ անորոշ և որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի (նախքան գործողության ժամկետի լրանալը) լուծման օրենսդրական հիմքում առկա են աշխատանքային հարաբերությունների զարգացմանը խոչընդոտող, կոլեկտիվ բանակցությունների ազատությունը սահմանափակող դրույթներ: Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի՝ «աշխատողն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ այդ մասին առնվազն երեսուն օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին: Կոլեկտիվ պայմանագրով կարող է նախատեսվել ծանուցման ավելի երկար ժամկետ»: Սովորաբար աշխատանքային հարաբերությունների մասնակիցների, մանավանդ աշխատողների համար, կոլեկտիվ պայմանագրով նախատեսվում են աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված երաշխիքներից բացի լրացուցիչ այլ երաշխիքներ: Մինչդեռ քննարկվող մասում սահմանվող նորմերով կոլեկտիվ պայմանագրով կարող է սահմանվել ծանուցման միայն ավելի երկար ժամկետ, ինչը, բնականաբար, չի բխում աշխատողի շահերից: Թե ինչու չի կարող ավելի կարճ ժամկետ սահմանվել, դժվար է ասել : Փաստորեն, ըստ գործող դրույթի, աշխատողների ներկայացուցիչները զրկված են կոլեկտիվ բանակցությունների ժամանակ քննարկելու աշխատողի կողմից աշխատանքային պայմանագրի լուծման ծանուցումը ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված 30 օրյա ժամկետից ավելի կարճ ժամկետում ներկայացնելու իրավունքից: Քննարկվող մասի առկա շարադրությամբ ստացվում է այնպես, որ կոլեկտիվ պայմանագրով աշխատողի համար ստեղծվում են ոչ բարենպաստ պայմաններ:

**Առաջարկություն -** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի «Կոլեկտիվ պայմանագրով կարող է նախատեսվել ծանուցման ավելի երկար ժամկետ» արտահայտության մեջ «երկար» բառը «այլ» բառով փոխարինելու դեպքում կողմերը կոլեկտիվ բանակցությունների ընթացքում կաշկանդված չեն լինի օրենսգրքի իմպերատիվ դրույթով և կոլեկտիվ պայմանագրում կնախատեսեն միմյանց համար առավել ընդունելի պայմաններ: Հետևաբար ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասը կունենա հետևյալ բովանդակությունը՝

«1. Աշխատողն իրավունք ունի լուծելու անորոշ ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը, ինչպես նաև որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիրը նախքան դրա գործողության ժամկետի լրանալը՝ այդ մասին առնվազն երեսուն օր առաջ գրավոր ձևով ծանուցելով գործատուին: Կոլեկտիվ պայմանագրով կարող է նախատեսվել ծանուցման ավելի ~~երկար~~ **այլ** ժամկետ: Ծանուցման ժամկետը լրանալուց հետո աշխատողն իրավունք ունի դադարեցնելու աշխատանքը, իսկ գործատուն պարտավոր է ձևակերպել աշխատանքային պայմանագրի լուծումը և աշխատողի հետ կատարել վերջնահաշվարկ**»:**

# «2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹ

## III ՓՈՒԼ

«Գործք» ամսագիրը շարունակում է «2012 թվականի Հայաստանի Հանրապետության մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» անվանակարգում հայտարարված մրցույթը:

Մրցույթի երրորդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և կառավարչական հմտությունների ստուգմանը վերաբերող մեկ թեստ:

Հարցաշարի յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորների թիվը կազմում է 10 միավոր:

Թեստային առաջադրանքը բաղկացած է առավելագույնը 14 միավորից:

Հարցաշարից և թեստից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակից դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Ստորև ներկայացվող հարցաշարի և թեստի պատասխաններն ուղարկել **press@gortsq.am** էլեկտրոնային հասցեին մինչև 2012 թվականի օգոստոսի 19-ը: Հարցաշարի և թեստի ճիշտ պատասխանները կտեղադրվեն **www.gortsq.am** կայքէջում՝ 2012 թվականի օգոտոսի 20-ին:

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ*** – Մրցանակաբաշխությունը տեղի կունենա 2013 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

# ՀԱՐՑԱՇԱՐ
# «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ»
# ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒԼԻ

**1.** Աշխատողը նաև անհատ ձեռնարկատեր է: Ժամանակավոր անաշխատունակության դեպքում անձն իրավունք ու՞նի ստանալու նպաստ, թե որպես անհատ ձեռնարկատեր, և թե, որպես վարձու աշխատող՝

ա) անձն իրավունք ունի ստանալու նպաստ և որպես անհատ ձեռնարկատեր, և որպես վարձու աշխատող,
բ) անձն իրավունք ունի ստանալու նպաստ իր նախընտրությամբ՝ կամ որպես անհատ ձեռնարկատեր, կամ որպես վարձու աշխատող,
գ) նպաստը կտրվի վարձու աշխատողին, սակայն միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս հաշվի կառնվի անհատ ձեռնարկատերի եկամուտները:

**2.** Հնարավոր է արդյո՞ք կազմակերպության ներսում միաժամանակ գործեն 2 տարբեր արհմիություններ՝

ա) այո, հնարավոր է,
բ) ոչ, հնարավոր չէ,
գ) հնարավոր է, եթե կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է տնտեսության տարբեր ճյուղերում:

**3.** Աշխատանքային գրքույկը ամբողջությամբ լրացվելու դեպքում՝

ա) տրվում է նոր գրքույկ,
բ) տրվում է կրկնօրինակ գրքույկ,
գ) հին գրքույկի մեջ դրվում է ներդիր:

**4.** Անձի մահվան դեպքում նրա ընտանիքի անդամին թաղման նպաստ չի տրամադրվում, եթե մահացող անձը եղել է՝

ա) գործազուրկ,
բ) կենսաթոշակառու,
գ) աշխատող:

**5.** Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատողը գործատուի նախաձեռնությամբ կարո՞ղ է ազատվել աշխատանքից՝

ա) կարող է, եթե առկա են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 173-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հանգամանքները,
բ) չի կարող,
գ) կարող է, եթե աշխատողը համաձայն չէ ազատվել աշխատանքից:

**6.** Աշխատանքի ընդունման ժամանակ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանության ստուգման գործընթացը կոչվում է՝

ա) ընտրություն,
բ) մրցույթ,
գ) ատեստացիա:

**7.** Զինապարտների մասին համապատասխան զինկոմիսարիատ տեղեկություններ է տրամադրվում՝

ա) մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 1-ը,
բ) մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը,
գ) մինչև տվյալ տարվա հունվարի1-ը:

**8.** Պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենը ազատվում է աշխատանքից, եթե՝

ա) մեկ տարվա ընթացքում ունի մեկ նկատողություն և մեկ խիստ նկատողություն,
բ) ունի առնվազն երկու չհանված կամ չմարված կարգապահական տույժ,
գ) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

**9.** Արձակուրդի համար միջին ամսական աշխատավարձ հաշվարկելիս նախորդ 12 ամսյա ժամանակահատվածում աշխատողի ստացած ամենամյա արձակուրդային գումարը ներառվում է արդյո՞ք միջին ամսական աշխատավարձի հաշվարկի մեջ՝

ա) այո, ներառվում է, եթե տվյալ ամսում աշխատողը որևէ (այդ թվում նաև արձակուրդի) պատճառով աշխատանքից բացակայություն չի ունեցել,
բ) ոչ, չի ներառվում,
գ) արձակուրդային գումարը ներառվում է մեկ տասներկուերրորդական մասով:

**10.** Միևնույն գործատուի մոտ համատեղության դեպքում՝

ա) պարտադիր չէ, որ ամենամյա արձակուրդը տրամադրվի հիմնական աշխատատեղում տրամադրվող արձակուրդի հետ միաժամանակ,
բ) ամենամյա արձակուրդը պարտադիր տրամադրվում է հիմնական աշխատատեղում տրամադրվող ամենամյա արձակուրդի հետ միաժամանակ,
գ) արձակուրդ չի տրամադրվում:

# ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒԼԻ

## Թեստ՝
## Շրջապատի վրա ազդելու ունակության աստիճանի որոշման

«Այո» կամ «ոչ» պատասխանեք հետևյալ հարցերին:

1. Ի՞նչ եք կարծում, ձեզ կսազե՞ր դերասանի կամ քաղաքական գործչի աշխատանքը:
2. Ձեզ չե՞ն նյարդայնացնում այն մարդիկ, ովքեր փորձում են գերժամանակակից հագնվել կամ ցույց տալ, թե գերժամանակակից են:
3. Ձեր ինտիմ կյանքի մասին կարո՞ղ եք զրուցել մեկ այլ մարդու հետ:
4. Անմիջապե՞ս եք արձագանքում ձեր խոսքերի կամ արարքների թեկուզ չնչին անճշտությամբ մեկնաբանություններին:
5. Անհարմարության զգացում ունենո՞ւմ եք, երբ ուրիշները հաջողության են հասնում մի ոլորտում, որտեղ ինքներդ կցանկանայիք կայանալ:
6. Սիրու՞մ եք զբաղվել որևէ դժվար գործով՝ միայն ապացուցելու համար, որ կարող եք դա անել:
7. Կարո՞ղ եք ամբողջությամբ նվիրվել ինչ-որ բացառիկ բանի հասնելուն:
8. Ձեզ հարմարավե՞տ եք զգում ընկերների միևնույն շրջապատում:
9. Նախապատվություն տալի՞ս եք համաչափ, ըստ ժամերի հաշվարկված կենսակերպին:
10. Հաճա՞խ եք փոխում ձեր բնակարանի կահույքի դասավորությունը:
11. Ձեզ դու՞ր է գալիս ամեն անգամ ինչ-որ բան անել նորովի:
12. Սիրո՞ւմ եք իր տեղը ցույց տալ այն մարդուն, ով, ըստ ձեզ, չափից դուրս ինքնավստահ է:
13. Ձեզ դո՞ւր է գալիս մատնացույց անել ձեր ղեկավարի կամ ուղղակի հեղինակավոր մեկի սխալները:
14. Ձեր կարծիքով դահլիճ մուտք գործելու դուռը պետք է բացվի դուրս, թե՝ ներս:

Պատասխանները լրացրեք ստորև ներկայացվող աղյուսակում՝ «այո» պատասխանի դեպքում նշում կատարեք 1-ին տողի համապատասխան վանդակում, «ոչ» պատասխանի դեպքում՝ 2-րդ տողի համապատասխան վանդակում:

**Ծանուցում:** Բոլորովին պարտադիր չէ, որ «այո» պատասխանը գնահատվի 1 միավոր, իսկ «ոչ» պատասխանը՝ 0 միավոր:

***Պատասխանների գնահատման սանդղակը***

| *Հարց* | *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* | *9* | *10* | *11* | *12* | *13* | *14* |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *այո* | | | | | | | | | | | | | | |
| *ոչ* | | | | | | | | | | | | | | |

**14-ից 9 միավոր հավաքելու դեպքում**, կնշանակի, որ դուք այնպիսի մարդ եք, ով ունի շրջապատի վրա ազդելու բոլոր նախադրյալները, ով կարող է փոխել մարդկանց կարծիքը, խորհուրդներ տալ, կառավարել նրանց: Մարդկանց հետ փոխհարաբերություններում դուք ձեզ լիովին վստահ եք զգում: Համոզված եք, որ մարդ չպետք է ինքնամփոփ լինի, խուսափի այլ մարդկանցից, մեկուսանա և մտածի միայն իր մասին: Դուք պահանջ եք զգում ինչ-որ բան անել շրջապատի համար, խոսել մարդկանց սխալների մասին, սովորեցնել ինչ-որ բան, որպեսզի նրանց մոտ հետաքրքրություն առաջանա արտաքին աշխարհի հանդեպ: Եվ այս դեպքում, նրանց հետ, ովքեր համաձայն չեն ձեր սկզբունքներին, ըստ ձեզ, պետք չէ առանձնապես նրբանկատ լինել: Նրանց պետք է ուղղակի համոզել՝ ապացուցելով ձեր

իրավացիությունը, և դուք հենց այդպես էլ անում եք: Սակայն պետք է հետևել, որպեսզի մարդկանց հանդեպ ձեր վերաբերմունքը ծայրահեղ դրսևորումներով չարտահայտվի: Հակառակ դեպքում դուք հեշտությամբ կվերածվեք մոլեռանդի կամ պարզապես տիրանի:

**8-ից 0 միավոր** հավաքելու դեպքում, կնշանակի, որ դուք նվազ համոզիչ եք թվում նույնիսկ այն դեպքում, երբ բացարձակ իրավացի եք: Համարում եք, որ ձեր կյանքը (ինչպես նաև շրջապատի մարդկանցը) պետք է կառուցված լինի կարգապահության, առողջ բանականության և լավ սովորությունների սկզբունքներով, իսկ կյանքի ընթացքն անհրաժեշտ է կանխատեսելի դարձնել: Դուք չեք սիրում հասնել որևէ բանի մեծ ջանքերի գնով: Երբեմն չափից դուրս անվստահ եք ձեզ զգում և այդ պատճառով չեք կարողանում հասնել ձեր առջև դրված նպատակին: Արդյունքում ձեր հանդեպ անարդարացիորեն են վարվում:

## «2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿԱՌԱՎԱՐԻՉ» ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

«Գործք» ամսագրի կողմից հայտարարված «2012 թվականի Հայաստանի Հանրապետության մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» մրցույթի ընտրական երկրորդ փուլի վերաբերյալ 2012 թվականի ապրիլի 20-ից մինչև մայիսի 30-ն ընկած ժամանակահատվածում www.gortsq.am էլեկտրոնային հասցեով ստացվել է 97 պատասխան:

Խնդրից և թեստային առաջադրանքից վաստակած միավորները բաշխվել են հետևյալ կերպ՝

- ✓ 0 - 23 միավոր են վաստակել 88 մասնակից.
- ✓ 24 - 29 միավոր՝ 3 մասնակից.
- ✓ 30 - 34 միավոր են վաստակել 3 անհատներ և 8 մասնակցից բաղկացած 1 խումբ.
- ✓ 35 - 40 միավոր՝ 2 մասնակից:



## «2012 թ. ՀՀ մարդկային ռեսուրսների լավագույն կառավարիչ» մրցույթի երկրորդ փուլից առավել բարձր միավոր վաստակած մասնակիցները

Տաթևիկ Հովսեփյան
«Վանաձորի Ծովակալ Իսակովի անվան N2 միջնակարգ դպրոց»ՊՈԱԿ-ի տնօրեն
(37) միավոր

Լուսինե Զուրաբյան
ՀՀ կենտրոնական բանկի հաշվապահ
(36) միավոր

Սոնա Դադալյան
«ԼՏ-ՊԻՐԿԱԼ» ՓԲԸ-ի Կադրերի բաժնի պետ
(34) միավոր

Լիլիկ Թումասյան
«Միջազգային Կարմիր խաչի անվ. պոլիկլինիկա»ՓԲԸ-ի կադրերի բաժնի վարիչ
(32) միավոր

Աշխատակազմի կառավարման ակադեմիայի VIII թողարկման շրջանավարտներ
(31) միավոր

Անահիտ Լեփեճյան
Մատենադարանի կադրերի բաժնի պետ
(30) միավոր

Վազգեն Հայրապետյան
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կադրերի գծով առաջատար ինժեներ
(27) միավոր

Լիլիա Համբարձումյան
«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ -ի կադրերի բաժնի տեսուչ:
(26) միավոր

Մարո Մինասյան
«Յունիբանկ» ՓԲԸ անձնակազմի կառավարման վարչության պետ
(24) միավոր

# ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ՁԵԶ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ուշադիր հետևեք ցանկին և ձեզ համար պարզեք, թե հատկապես ինչն է կանգնած ձեր և հաջողության միջև: Մի քանի խորհուրդ, որոնք կօգնեն ձեզ լինել հաջողակ և երջանիկ:

1. Դադարեք ուրիշների կարծիքների մասին մտածելուց: Ի՞նչ են մտածում ձեր մասին ուրիշները՝ այդքան կարևոր չէ, կարևոր է, թե դուք ի՞նչ եք մտածում ձեր մասին:

2. Դադարեք վախենալ ռիսկով գործելուց: Ռիսկը ձեր կյանքի անբաժանելի մասն է: Շատ, թե քիչ, բայց, միևնույն է, այն կա յուրաքանչյուրիս կյանքում: Մարդը լոկ այն ժամանակ է ինչ-որ բանի հասնում, երբ հավատում է իր ուժերին:

3. Դադարեք վախենալ սեփական սխալներից: Չպետք է վախենալ սխալ գործելուց, որովհետև դրա պատճառով դուք կարող եք բաց թողնել ձեր նպատակին հասնելու շատ հնարավորություններ: Առանց վախի զգացողության հաղթահարման՝ դժվար է հասնել հաջողության: Պետք է հաղթեք ձեր թշնամուն՝ ներքին վախին:

4. Դադարեք չափից ավել աշխատասեր լինելուց :Աշխատանքը շատ կարևոր մաս է կազմում մեր կյանքում, բայց չի կարելի ձեզ ամբողջությամբ նվիրեք աշխատանքին: Պետք է կարողանալ թուլանալ և հանգստանալ, ժամանակ տրամադրել ընտանիքին, կարողանալ ձեզ պարգևատրել կատարած ծանր աշխատանքի համար: Եթե ձեր հանգիստը ճիշտ չկազմակերպեք, կարճ ժամանակից շարքից դուրս կգաք:

5. Դադարեք վերադառնալ անցյալ և կախվել ապագայից: Կյանքն այն է, ինչ կատարվում է ներկայում, այստեղ և հենց հիմա. չի կարելի բաց թողնել ներկան:

6. Դադարեք ձեզ չափից ավելի լուրջ պահելուց, վայելեք կյանքը և ուրախացեք: Հաջողությունը նրա մոտ է գնում, ով կարողանում է ինքն իր հետ ծիծաղել, գոհանալ ունեցածից: Կյանքը շատ թանկ է, մի՛ կործանիր:

7.Դադարեք ամեն ինչ բարդացնելուց: Դուք եք ձեր կյանքի տերը, թե ինչքանով է այն պարզ կամ բարդ կախված է ձեզանից և նրա նկատմամբ ձեր վերաբերմունքից: Կյանքում ամեն կատարված երկու կողմ ունի՝ նայած դուք, որ կողմից եք նայում: Ամեն մի անհաջողություն իր մեջ կրում է հաջողության հատիկը: Հիշեք՝ անհաջողության վերջում ամենամեծ հաջողությունն է, պետք չէ երկնչել ու նահանջել:

8. Դադարեք հեշտ ճանապարհ փնտրելուց: Կյանքում, եթե ձգտում եք ինչ-որ բանի հասնել, ապա մի՛ վախեցեք դժվարությունից, քայլ արեք, շարժվեք առաջ: Դժվարությունները մարդու մեջ ծնում են դրանք հաղթահարելու անհրաժեշտ ընդունակություններ:

9. Դադարեք «ես չեմ կարող» խոսքերն ասելուց: Ինչպես Հենրի Ֆորդն է ասել. «եթե դուք մտածում եք, ունակ եք ինչ-որ բան անել, ապա դուք ճիշտ եք, իսկ եթե մտածում եք, որ ձեզ մոտ ինչ-որ բան անել չի ստացվի, դուք նորից ճիշտ եք»: Կարողացիր համագործակցել: Շատ անգամ մարդն անհաջողության է մատնվում, որովհետև չի տիրապետում թիմային աշխատանքին, իսկ լավ թիմի համագործակցված աշխատանքը մեծ պտուղներ է տալիս:

10. Դադարեք գործի համար հարմար պահին սպասելուն: Մեզանից շատերը գործի հաջողություն չեն ունեցել, որովհետև անընդհատ հարմար պահի են սպասել, իսկ այդ պահը այդպես էլ չի գալիս: Պետք չէ սպասել, պետք է գործել անմիջապես ձեռքի տակ եղած միջոցներով, այլապես ուշ կլինի: Պետք է նախաձեռնություն ցուցաբերել, իսկ հաջողությունն ինքը կգա:

11. Դադարեք խոստումներ տալ, եթե չեք կարող կատարել: Մի խոստացեք չափից ավելին, հիշեք՝ վաղ թե ուշ ձեր ասածի համար պատասխան պիտի տաք:

12. Դադարեք ճանճը փիղ դարձնելուց: Ձեզ հարց տվեք՝ սա կհիշվի մի տարի հետո, եթե ոչ, ուրեմն չարժե անհանգստանալ դրա համար:

13. Եղեք ազնիվ ամեն ինչում: Ինչ բնագավառ էլ, որ վերցնելու լինենք ,եթե կա խարդախություն, այնտեղ հաջողություն մի փնտրեք: Մեծ եկամուտներ է բերում հիմնարկին ղեկավարի կամ հիմնարկի բարի համբավը՝ վարկանիշը/ ռեյտինգը/, իսկ հակառակ դեպքում կորուստներն անխուսափելի են:

14. Դադարեք ձեր զգացմունքները և մտքերը ձեր ներսում պահել: Մարդիկ չեն կարողանում մտքեր կարդալ, եթե ձեզ աջակցություն է պետք, ապա ասացեք այն, ինչն անհանգստացնում է ձեզ:

15. Հիշեք՝ հավատը նախաձեռնության նկատմամբ հաջողության գրավական է, իսկ նախապաշարումները՝ անհաջողության: Հաջողակ մարդը միշտ հույսը իր և Աստծո վրա է դնում, իսկ անհաջողակը՝ բախտագուշակների ու նախապաշարումների:

16. Դադարեք փողերը աջ ու ձախ շաղ տալուց: Վատնումը ոչ մի անգամ ոչ մեկին հաջողության չի բերել: Վարժվեք խնայողությանը, հավաքեք ստեղծված գումարի մի մասը ձեր գործի և կյանքի ապահովության համար, որովհետև գումարի բացակայությունը անհաջողության ամենատարածված պատճառներից մեկն է նրանց համար, ովքեր գործը սկսել են առանց հովանավորի և աջակցության: Աշխատեք խնայողություններով ստեղծել ձեր կանոնադրական կապիտալը, որը պաշտպանիչ դեր կունենա սնանկացումից պաշտպանվելու համար:

17. Դադարեք վատը մտածելուց: Դրական մտածելակերպը շատ է օգնում հաջողության հասնելուն: Եթե դուք ամեն առավոտ արթնանալիս վստահ լինեք, որ այսօր ինչ-որ լավ բան կլինի, ապա մի կասկածեք՝ կլինի:

Դուք կարող եք այս կետերը շարունակել, ուշադրություն դարձրեք այն կետերին, որոնք կարևոր կհամարեք ձեր գործունեության մեջ:

Հաջողություն ձեզ:

Էմմա Տանանյան

# Հաղթ
# ու
# Պատասխան

# ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է «ԳՈՐԾՔԻ» ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ

## (ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԸ ԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՌԱՆՑ ԽՄԲԱԳՐՄԱՆ)

**Հարց 1.(հարցնողը չի ցանկացել նշել իր անունը)**

**Լսել եմ, որ շուտով ամբողջովին փոփոխվելու է «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը: Արդյո՞ք դա այդպես է, և արդյո՞ք այդ փոփոխությունից աշխատողը չի՞ տուժի:**

**Պատասխան 1.**

Այո, ճիշտ եք լսել: 2013թ. հունվարի 1-ից գործողության մեջ է մտնում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը, որով ուժը կորցրած կճանաչվի «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները: Փաստորեն, փոփոխվում է եկամուտների նկատմամբ հաշվարկվող եկամտահարկի և պարտադիր վճարների գաղափարաբանությունը: Նոր ընդունված օրենքով մի կողմից գործատուն (գործատուի սոցվճարի մասով) և աշխատողը (3 %-ի չափով) ազատվում են աշխատողի աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող պարտադիր սոցիալական ապահովության վճար կատարելու պարտավորությունից, իսկ մյուս կողմից մեծանում է աշխատողի կողմից ստացվող եկամտի նկատմամբ հաշվարկվող հարկի տոկոսաչափը: Ուրիշ խոսքով՝ 2013թ. հունվարի 1-ից «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով աշխատավարձի նկատմամբ մինչ այդ հաշվարկվող հարկի և պարտադիր վճարների բազմազանությունից անցում է կատարվում մեկ միասնական հարկատեսակի: Վերանում է պարտադիր սոցիալական ապահովության վճար կատարելու գործատուի և աշխատողի պարտավորությունները, իսկ եկամտահարկի մասով ներմուծվում են նոր կանոնակարգումներ: Փոփոխվում են եկամտային հարկ վճարողների շրջանակը, եկամտային հարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը, մի խոսքով այդ հարկատեսակի գծով ամբողջ քաղաքականությունը: Այսպես՝ մինչև 120.000 դրամ աշխատավարձ ստացող աշխատողի աշխատավարձի նկատմամբ հարկային գործակալի միջոցով եկամտային հարկը կհաշվարկվի 24.4 տոկոսի չափով, 120.000 դրամից ավելիի դեպքում՝ 29.280 դրամին գումարած 120.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսի չափով եկամտային հարկ: Իսկ հարկային գործակալի միջոցով չհարկված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվելու է հետևյալ դրույքաչափերով. տարեկան մինչև 1.440.000 դրամ հարկվող եկամուտ ունեցող անձից պահած (գանձած) հարկի գումարը կկազմի հարկվող եկամուտի 24.4 տոկոս, իսկ 1.440.000 դրամից ավելիի դեպքում՝ 351.360 դրամին գումարած 1.440.000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը:

Ինչպես նկատում եք, օրենքով մեծանում է աշխատողի եկամուտից հարկ վճարելու բեռը և դրանով պայմանավորված թվում է, թե պետք է նվազի աշխատողի իրական աշխատավարձի չափը: Սակայն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասով և ՀՀ կառավարության 2012թ. մայիսի 31-ի N 692-Ն որոշմամբ սահմանվել են 2013թ. հունվարի 1-ից հետո աշխատավարձ սահմանելու այնպիսի հատուցակարգեր, որով գործատուն պարտավոր է իր մոտ աշխատողների աշխատավարձի չափը բարձրացնել այնքան, որ պահումից (գանձումից) հետո պահպանվի աշխատողի նախկինում ստացած աշխատավարձի չափը:

Առիթից օգտվելով՝ ցանկանում եմ նշել, որ «Գործքի» ծրագրավորման և ավտոմատացման խումբը մշակել է համակարգչային ավտոմատացված ծրագիր, որով հաշված վայրկյաններում հնարավոր կլինի կիրառել գործատուի նկատմամբ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2012 թ. մայիսի 31-ի N 692-Ն որոշմամբ սահմանված պահանջները:

Եթե ցանկանում եք ունենալ համակարգչային ավտոմատացված վերոհիշյալ ծրագիրը, ապա դիմեք

«Գործք» ամսագրի խմբագրություն:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ սկսվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի կիրարկմանը վերաբերող մեկօրյա սեմինարների շարքը: Նկատի ունենալով սեմինարին մասնակիցելու ցանկություն ունեցողների թիվը «Գործքի» ինտերնետային կայքում տեղադրվել է սեմինարի անցկացման ժամանակացույցը: Սեմինարին մասնակցելու ցանկություն ունեցող յուրաքանչյուր 20-րդ անձի գրանցվելուց հետո հաջորդ գրանցվողը ինքնաբերաբար (ավտոմատ) կհաշվառվի ժամանակացույցում նախատեսված հաջորդ սեմինարի օրը:

Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ՝ այցելելով www.gortsq.am կայք:

**Հարց 2. «Նատալի ֆարմ» ՍՊԸ**

Արդյո՞ք անձը կարող է մեկ տարի շուտ անցնել կենսաթոշակի: Եթե այո, ապա ինչ պայմանների առկայության դեպքում :

**Պատասխան 2.**

Անձն իրավունք ունի տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքից մեկ տարի շուտ անցնելու կենսաթոշակի, եթե ունի առնվազն 35 տարվա աշխատանքային ստաժ և չի աշխատում («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մաս): Ընդ որում՝ ըստ ՀՀ կառավարության 2011թ. մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման N2 հավելվածով հաստատված «Կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժը հաշվարկելու, դրանում աշխատանքային կամ այլ գործունեության առանձին տեսակներ հաշվառելու կանոնների» 6-րդ կետի՝ աշխատանքային ստաժի հաշվարկման ժամանակ հաշվի է առնվում հետևյալ առանձնահատկությունը. աշխատանքային ստաժի հանրագումարի մեջ (տարի, ամիս, օր) մինչև 6 ամսվա (180 օրվա) ժամանակահատվածը չի հաշվառվում, իսկ 6 ամսվանից ավելի ժամանակահատվածը հաշվառվում է որպես մեկ տարվա ստաժ:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ժամկետից 1 տարի շուտ կենսաթոշակի անցած անձի կենսաթոշակի վճարումը դադարեցվում է՝ կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակառուի աշխատելու դեպքում:

**Հարց 3. «Սպայկա» ՍՊԸ**

Հարգելի «Գործք», խնդրում եմ տալ ձեր դիրքորոշումը և խորհրդատվությունը հետևյալ հարցի վերաբերյալ.

Սույն թվականի հունիսի 1-ից դադարեցվել է ՀՀ քաղաքացիներին սոցիալական քարտերի տրամադրումը: Այս դեպքում, եթե քաղաքացին չունի սոցիալական քարտ, ինչպես պետք է ներկայացնի անհատական հայտը և հաշվետվությունը:

**Պատասխան 3.**

2011 թվականի նոյեմբերի 30-ին ընդունված «Հանրային ծառայությունների համարանիշների մասին» ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 2012 թվականի հունիսի 1-ին, ուժը կորցրած է ճանաչվել «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքը: Նոր օրենքով որևէ փոփոխություն չի կրել գործատուների կողմից իրավասու պետական մարմիններին անհատական հաշիվ բացելու հայտ կամ անհատական հաշվետվություն ներկայացնելու, կամ դրանք լրացնելու կարգում: Եթե մինչև 2012 թվականի հունիսի 1-ը աշխատանքի ընդունվող անձը պետք է գործատուին ներկայացներ սոցիալական ապահովության քարտ կամ այն չունենալու մասին տեղեկանք՝ տրված աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող «Նորք» տեղեկատ-

վավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ից, ապա նոր օրենքով աշխատանքի ընդունվող անձը գործատուին պետք է ներկայացնի բնակչության պետական ռեգիստր վարող լիազոր մարմնի (լիազոր մարմին է համարվում ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը կամ իր բնակության վայրի տարածքային անձնագրային ծառայությունը) կողմից տրված հանրային ծառայությունների համարանիշը կամ այն չունենալու մասին տեղեկանք: Պարզապես անհատական հաշիվ բացելու հայտի և անհատական հաշվետվության ձևի «Սոցիալական քարտի համարը» տողի վանդակներում լրացվում է հանրային ծառայությունների համարանիշը:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին նախկինում տրված սոցիալական ապահովության քարտերի համարները համարվում են հանրային ծառայությունների համարանիշեր, իսկ սոցիալական ապահովության քարտերը շարունակվում են օգտագործվել այն նպատակի համար, ինչի համար դրանք նախատեսված էր:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ շարունակում է գործել վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169[18] հոդվածը, որով անհատական հաշիվ բացելու հայտ կամ անհատական հաշվետվություն չներկայացնելը առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ մեկ տարվա ընթացքում նույն խախտումը կրկնելը՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

**Պատասխան 4.**

Հարց 4. Լուսինե Հովհաննիսյան

Խնդրում եմ պատասխանել աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրի (tabel) ձևը պետք է պարտադիր վարենք, թե ոչ:

Շնորհակալություն:

Ձեզ հավանաբար շփոթության մեջ է գցել այն հանգամանքը, որ 24.06.2010 թվականի ՀՕ-118-Ն օրենքով ուժը կորցրած է ճանաչվել աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր չվարելը վարչական պատասխանատվություն սահմանող Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[7] հոդվածը: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ շարունակում է գործել գործատուի կողմից աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր վարելու ՀՀ աշխատանքային օրենսգրքի (հոդված 142-րդ հոդվածի 6-րդ մաս) իմպերատիվ պահանջը: Ավելին, այն չվարելը կարող է որակվել որպես աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների խախտում և արդեն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 41-րդ հոդվածի հիմքերով առաջացնել պատասխանատվություն:

**Պատասխան 5.**

**Հարց 5. «Ժողովրդական երաժշտության ազգային կենտրոն» ՊՈԱԿ**

Կազմակերպությունը կարո՞ղ է 3 տարով ծառայության մատուցման պայմանագիր կնքել մեկ այլ կազմակերպության հետ : Եթե այո, ապա ի՞նչ իրավունքով :

Ձեր հարցը կարգավորվում է քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածով, ըստ որի՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս: Պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով: Եթե ձեր կողմից հիշատակված պայմանագրի ժամկետները սահմանված չեն օրենքով կամ այլ իրավական ակտերով, հետևաբար դուք և ձեր հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող ձեր գործընկերը ազատ եք պայմանագրի գործողության ժամկետ սահմանելու հարցում: Ավելին, եթե ձեր միջև կնքված պայմանագրում ժամկետներ սահմանված չեն, ապա քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը գործում է մինչև դրանով որոշված պարտավորության կատարման ավարտը: Այն կարող է 3 տարուց ավել լինել:

# ԱՄՍԱԳՐԻ ԺՈՒՅԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ

# ԱՐԶԱԳԱՆՔ
## ՇՈՒՐՋՕՐՅԱ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ
# FM 103’5

Ձեզ հետ, Ձեզ համար...

RADIO FM 103.5
ԱՐԶԱԳԱՆՔ

Հեռ./ֆաքս՝ +374 10 65 00 14, +374 10 65 29 31
ՀՀ, 0047, Երևան, Արմենակ Արմենակյան 250, 8-րդ հարկ («Նաիրի» հյուրանոցի շենքում)
www.ardzagank.com

# «ԳՈՐԾՔ» ՍՊԸ-Ի «ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՆ» ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՍՈՎՈՐԵԼՈՒ

«ԳՈՐԾՔ» ՍՊԸ

«Աշխատակազմի կառավարման ակադեմիան» կազմակերպում է ուսուցում՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

- «Աշխատակազմի ղեկավար»
- «Կադրային գործավար»
- «Հաշվապահական հաշվառում»

«Աշխատակազմի կառավարման ակադեմիան» ավարտած անձինք կկարողանան իրականացնել՝

- Արդյունավետ կառավարում
- Անսխալ կադրային գործավարություն
- Անթերի հաշվապահական հաշվառում

## «Աշխատակազմի կառավարման ակադեմիայում» դասավանդում են առաջատար մասնագետներ

## Դասընթացները կազմակերպվում են տեխնիկապես հագեցած պայմաններում՝ ուսուցման ժամանակակից մեթոդներով

Հասցե՝ ք. Երևան, Սարմենի 1, 2/1 տարածք, 0009
Հեռ.՝ (010) 56 18 56, 519 005, 519 008

էլ. փոստ՝ gortsq@gortsq.am, press@gortsq.am
www.gortsq.am, www.press.gortsq.am